Пошел я в тахапетаран. А там своя современная система выдачи справок. Для полной объективности. Данные посетителя запускают в компьютер, и сам компьютер на выходе дает соответствующую справку. Измерили параметры моей фигуры, походки, привычек, запросов, образа жизни и т. д. Заложили в компьютер. Девушка села перед монитором и стала заполнять справку по показаниям на экране. Наконец вытаскивает бумажку и подает мне. Беру и читаю: «Фигура согбенная, с горбом, длинные ноги едва передвигает, словно они зарылись в песок, живот сильно подтянут, спина тронута остеохондрозом, левая нога - с воспалением седалищного нерва; транспортом обычно не пользуется, однако на себе может таскать тяжелые поклажи; питается с большими паузами пищей с добавлением гормональных препаратов, воду пьет два раза в сутки, в иные дни совсем не пьет; в качестве лечебных средств использует просроченные лекарства; жилище зимой не отапливает; постоянно в нервном напряжении, поскольку его то и дело погоняют новыми растущими наложениями и поборами. Однако все еще наивно веру блюдет в то, что покажется свет в конце тоннеля. Заключение: поскольку веру блюдет, то субъект, скорее всего, верблюд. Возит на горбу «новых» армян. Далее - подпись и круглая печать тахапетарана... И вот, получив такую справку, я не смог сдать свое заявление в суд о взыскании моей невыплаченной зарплаты за четыре года работы в прошлом веке. И действительно, какая зарплата верблюду? Его только грузят и грузят. И пенсию дают с усушкой и утруской - в виде саксаула или перекасти-поля. А что дают, то тут же отбирают в виде налогов, поборов и платежей.

Роберт ОГАНЯН.

## Премии конкурса скрипачей

В Ереване завершился Второй международный конкурс исполнителей имени Арама Хачатуряна, в котором приняли участие 18 скрипачей из Франции, России, Китая, США, Грузии, Туркменистана и Армении. Он прошел в три тура: на второй тур прошли 12 участников, на завершающий - 7.

Жюри конкурса под председательством композитора Карена Хачатуряна подвело итоги: I премию поделили Мартин ЯВРЯН (Армения) и Сатеник КУРДОЯН (Франция); II - Геворг КАРАБЕКЯН (Франция) и Сюзи ЕРИЦЯН (Армения); III - Айя МУРАКИ (японка из США) и Марианна АСРИЕВА (Грузия). Специального приза и диплома удостоена Астхик ВАРДАНЯН.

## Шарль Азнавур - почетный гражданин Ахалцихе

Великому шансонье Шарлю Азнавuru присвоено звание почетного гражданина Ахалцихе - города на юге Грузии, где родился и жил его отец и где похоронены его дед и бабушка. 29 мая певец в течение трех часов находился в этом городе.

Певец также побывал в местной армянской школе. В его честь прошел концерт самодетельных коллективов. Знаменитый певец и композитор заявил, что «очень тронут теплым приемом в Грузии и очень рад тому, что удалось побывать в Ахалцихе». Семья Азнавуров около 100 лет назад уехала из Грузии в Грецию, оттуда - во Францию, где 81 год назад и родился Шарль.

# Подлинное развитие может обеспечить лишь свободный труд

7 июня исполнилось 10 лет со дня основания Российской партии самоуправления трудящихся

Московская политическая элита и широкие круги общественности торжественно отпраздновали 10-летие со дня основания Российской партии самоуправления трудящихся (РПСТ). В 1995 году ее создал всемирно известный врач-офтальмолог, академик Святослав Николаевич Федоров. В преддверии юбилея мне довелось встретиться и побеседовать со вдовой Федорова Ирэн Ефимовной. В разговоре выяснилась любопытная подробность: Святослав Николаевич всегда с большой теплотой и любовью отзывался об армянах и Армении, которую знал не понаслышке. В годы войны десятилетним мальчиком он вместе с семьей был эвакуирован в Цахкадзор. Поэтому Федоров очень остро переживал все трудности, которые выпали на долю любимой им Армении и Карабаха в последние годы, живо интересовался всеми новостями, связанными с военно-политическими коллизиями в регионе.

Конечно, причиной такого пристального интереса были не только личные симпатии академика. Великий гражданин и патриот, он не мог равнодушно относиться к ситуации, в которой оказались Россия и бывшие советские республики в середине 90-х годов. Распад Союза, жестокие социально-экономические эксперименты «младореформаторов», падение жизненного уровня, вспыхнувшие по периметру недавно еще великой державы военные конфликты поставили десятки миллионов людей буквально на грань выживания. При этом ни «новые правые», ни «традиционные левые» не были в состоянии предложить внятных, действенных рецептов преодоления кризиса.

Именно поэтому Святослав Федоров решил пойти в большую политику. Это не было данью моде того времени, конъюнктуре момента, стремлением к славе. Да и то сказать — вряд ли кто в России был прославлен больше, чем Федоров, возвративший зрение десяткам тысяч людей, которые буквально молились на него.

Причина заключалась в ином. Новая партия, по мысли академика, должна была стать тем политическим инструментом, с помощью которого трудящиеся могли бы эффективно отстаивать свои законные интересы в непривычных условиях сложного и неоднозначного процесса реформирования всех сторон нашей жизни. Федоров был убежден, что добиться этого можно путем внедрения принципов самоуправления в важнейшие сферы жизнедеятельности общества, устранения наемного труда, развития института народных предприятий. Результатом должно стать становление социально справедливых отношений, основанных на принципах производственной демократии и самоуправления.

«Согласно идеологии РПСТ, собственность предприятий должна принадлежать их работникам, которые, таким образом, превратятся одновременно и в производителей, и в совладельцев средств производства, — говорит член Совета Федерации Федерального собрания Российской Федерации, председатель Российской партии самоуправления трудящихся, известный российский политик и общественный деятель Левон Чахмахчян. — Мы убеждены, что только свободный труд, результатами которого владеет и распоряжается сам работник, способен обеспечить подлинное развитие и человеку, и государству в целом». Народные предприятия — это и современные формы организации производства, и участие в управлении, и возможность воздействия на власть, и эффективные способы социальной защиты работников. Более того, самоуправление как система жизнеустройства общества в целом является традиционной для России формой народовластия. Но при этом сегодня и в США, и в Европе, и в Китае также есть много позитивных примеров весьма успешного производственного самоуправления. Это означает, что идеи Федорова органично вписываются в современную структуру цивилизованных рыночных отношений.

Не случайно поэтому, что РПСТ нередко называют еще «партией здравого смысла и национального оптимизма». И действительно: последователи и единомышленники Святослава Николаевича не

приемлют политического экстремизма, конъюнктуры, деструктивных разрушительных подходов. Они справедливо убеждены, что процветание возможно лишь в условиях стабильности, законности и прочного демократического порядка.

Партия имеет внятную концепцию развития и предлагает конкретные пути оздоровления социально-экономической жизни. Это привлекает к ней людей. За прошедшие годы РПСТ стала заметным участником общественно-политических процессов. «Партия Федорова» сумела сплотить вокруг себя десятки тысяч единомышленников, провести своих представителей в органы региональной и местной власти, создать отделения в более чем 60 республиках, краях и областях России. В 1995 году, во время выборов в Государственную думу, РПСТ не хватило всего лишь 0,5 процента голосов для того, чтобы сформировать в парламенте свою фракцию. А еще через год Святослав Федоров принял решение баллотироваться на пост президента Российской Федерации. Опасаясь популярности академика, «вся королевская рать» тогдашнего Кремля всячески пыталась помешать опасному конкуренту, причем в ход пошли приемы и методы, которые при всем желании не назовешь честными. Зато соотечественники поверили в его программу, и Федоров получил миллионы голосов в свою поддержку.

И в те годы, и сегодня социальной базой РПСТ был и есть самостоятельный производитель, человек реального труда — от представителей бизнеса федерального масштаба до хозяев небольшого дела и рядовых тружеников. Немало среди партийцев также видных деятелей науки, культуры и искусства. Достаточно назвать имена многократного чемпиона мира по шахматам Анатолия Карпова, президента Российской академии медицинских наук академика Валентина Покровского, Героя России Магомеда Толбоева, писателя и публициста Генриха Боровика... В том, что РПСТ, в отличие от многих других партий, занимает достойное место в многоцветной политической палитре современной России, велика заслуга ее лидера, сенатора Левона Чахмахчяна. Именно ему, ближайшему соратнику и сподвижнику Святослава Николаевича, руководителю президентской кампании Федорова в 1996 году, после трагической гибели академика пять лет назад партийцы поручили возглавить партию. И в своем выборе не ошиблись. Во многом благодаря его неустанной, поистине подвижнической деятельности система взглядов и подходов РПСТ вызывает все больший общественный интерес, находит понимание и поддержку в высших эшелонах российской власти. Сегодня у партии много истинных друзей и за пределами страны, в частности в Армении, с политическим руководством которой Левона Чахмахчяна связывают теплые дружеские отношения. Заметим, что этому способствует и активная работа Левона Хореновича в качестве первого вице-президента Ассоциации российско-армянского делового сотрудничества, одним из главных создателей которой он является. «Наша главная задача — консолидировать силы общества вокруг значимых проектов развития страны — во имя удовлетворения жизненных интересов и нужд большинства, во имя превращения России в процветающее правовое государство, где достойно живут и трудятся свободные люди, уверенные в своем будущем и будущем своих детей. Убежден, что в этом случае изменения к лучшему непременно почувствуют и все жители стран СНГ. Ведь все мы прочно связаны общей историей, общими интересами и общим для всех стремлением сделать нашу жизнь лучше, свободнее, богаче. А теория и практика самоуправления — ключ к достижению этой стратегической цели», — говорит Левон Чахмахчян.

Что ж, как любил повторять Святослав Федоров, если трудиться «вместе со всеми ради блага каждого», то любая цель непременно будет достигнута.

**Иван БОРИСОВ.**



# ԱՅՍՊԵՍ ԾՆՎԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 28-ը հայոց պետականության ծննդյան օրն է: 1918-ի մայիսյան այս օրերին Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում ամբողջ հայությունը կենաց ու մահու կռիվ էր մղում թշնամու դեմ: Այդ ճակատամարտերում ձեռք բերված հաղթանակով դրվեց անկախ պետականության հիմքը, ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

Ահա թե ինչ է պատմում Ավետիս Ահարոնյանը: Մայիս էր: 1918 թվականի մայիսը: Կռիվ էր Արարատյան աշխարհում: Վանի, Վասպուրականի գոյամարտն էր փոխադրվել Երևան. թշնամին նույնն էր, կռվողները՝ նույնը, նպատակը՝ նույնը: Հայոց աշխարհի ազատությունը:

Թշնամին Երևանի վրա էր խուժում Բաշ Ապարանի և Սարդարապատի վրայով: Որպես մեր հին հերոսական օրերի մի հզոր արձագանք հնչում է հրամանատարի՝ գորավար Սիլիկյանի կոչը հայ ժողովրդին.

«Հայեր, հասել է ժամը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, հայրենիքի փրկության և իր կնոջ, աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար... Մեր նամարդ թշնամին ուզում է ստրկացնել մեզ, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Հայեր, ժամանակը չէ դանդաղության: Բոլոր մինչև 50 տարիք ունեցողները պարտավոր են զենքի տակ գալու իրենց զենքերով ու փամփուշտներով Հայրենիքի պաշտպանության համար...»:

Այս կոչը ապարդյուն չանցավ: Մեր բանակը վճռական ճակատամարտեր տվեց Բաշ Ապարանում, Սարդարապատում, Ղարաքիլիսայում: Այդ օրերին Հայոց աշխարհի երկու հսկաները՝ Մասիս և Արագած, մեկը մռայլ ու ահարկու, մյուսը՝ պառավ կաթոզին մայր, նայում էին իրենց ոտքերի տակ հեղեղվող անցքերին: Դարերից ի վեր առաջին անգամն է իրենց զավակների այս մրրկաշունչ ընդվզումը թշնամիների դեմ: Հին քենը թանձրացել է ու խտացել որպես եռուն ձյուր, Արարատյան դաշտը թնդում է ահեղ

բախումներից: Արաքսը փրփրում նժույգի պես ծառս եղած իր ալիքներով կատաղորեն իր կուրծքն է կրծում ու հավար կանչում. Մասիսի այրերից սանձակոտոր հողմերն են դուրս պրծել ու սուրում են դաշտերի վրա՝ մտրակելով խավարը, ոռնում են, ճշում սրտապատառ: Արագածի կատարին մի ամպ է խտանում, և աստղերը երկնքում մեղմիվ շշնջում են իրար Հայոց աշխարհի հեքիաթն անծայր: Եվ վարում՝ կռիվ է անողորմ ու արյունահեղ, երկու բանակներն իրար են պլլված, որպես երկու վրիժաճարավ վիշապներ:

Հայ ցեղը այդ օրերին սրբազան Ավարայրը ոգեկոչեց և իր մեծ հայրերի ռազմական կորովով կյանքի և մահու մարտի ելավ՝ իր հայրենի ժառանգությունը վայրագ բարբարոսներից ազատելու համար:

Եվ Հայոց աշխարհի սիրուն, երկու հազարի չափ մեր ընտիրները իրենց մատաղ կյանքը գոհեցին: Եվ թշնամին, որ մի քանի անգամ ավելի կորուստներ ունեցավ, երկար ժամանակ պիտի հիշի այդ ճակատամարտը, ինչպես պարսիկներն Ավարայրը (451թ.) և արաբները՝ Վարդանակերտը (702թ.):

Արդարև, այդ երեք հերոսամարտերը մեր պատմության ավետուփ ծովից դուրս ցցված գրանիտե ժայռեր են, որոնց վրա երեք անգամ հայ հայրենիքի թշնամիների կատաղության ալիքները փշրվեցին:

Եվ եթե Ավարայրը հզորագույն սատարիչն եղավ Մամիկոնյան Մարզպանության մեր աշխարհում, և Վարդանակերտը Բագրատունյաց փառավոր տոհմի ուղին հարթեց դեպի հայկական գահը, Ղարաքիլիսա-Սարդարապատը մեր օրերում Հայաստանի Հանրապետության հիմքերը ձգեցին Միացյալ և Անկախ Հայաստանի համար:

Այսպես ծնունդ առավ Հայաստանի Հանրապետությունը, իր եռագույնի թրթռուն ծալքերի տակ եռացող Մեծ Խորհրդին՝ իր Վահագնին աչքերը սևեռում:

## ԱՊԱՐԱՆՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՔԱՐ-ՏԱՌԵՐԻ ՊՈՒՐԱԿ



Հայ գրերի գյուտի 1600-ամյակի կապակցությամբ Ապարանի մայրուղու վրա մայիսի 21-ին բացվեց Քարտառերի պուրակ:

Հուշարձանի կառուցման գաղափարը, ըստ «Նիզ-Ապարան» հայրենակցական միության նախագահ, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի, ծնվել է միաս-

նության շուրջպարի շրջանակում: Նրա խոսքերով, բոլոր սրբերի համար կառուցվել են հուշարձաններ, սակայն հայոց այբուբենը կարծես անտեսվել էր: Ուստի որոշում է կայացվել հայ գրերի հուշար-

ձան կանգնեցնել, ինչը նախադեպը չունեցող երեւոյթ է մոլորակի վրա:

Հուշարձանը կառուցվել է շատ սեղմ ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, և, ինչպես նշեց Աղվան Հովսեփյանը, ոչ մի լուծման չի ծախսվել՝ դա արվել է բարի կամքի դրսևորմամբ: Հուշարձանի տեղադրման համար հատկապես տվյալ վայրն է ընտրվել, քանի որ այն ծովի մակերևույթից բարձր է 1600 մետր:

Ա. Հովսեփյանի խոսքերով, հուշարձանը միասնության խորհրդանիշ է, տառերից յուրաքանչյուրը որևէ իմաստ չեն արտահայտում, եթե դրանք միասին չեն: Նա հայտնեց նաև, որ մինչև Արագած լեռը կառուցվելու են հուշարձաններ: Նախատեսվում է, որ լեռան լանջերին տեղադրվելու են հայոց տառերով գրված բոլոր կոթողային ստեղծագործությունների հուշարձանները:

ՆՈՅՆԱՆ ՏՊՊԱՆ

## ՔԱՐԵ ԱՅԲՈՒԲԵՆ-ՀՈՒՇԱՐԶԱՆԸ ԳՐԱԳԱՐԱՆ ԿԴԱՌՆԱ

Աշտարակից Ապարան տանող մայրուղու մոտ տեղակայված մեր այբուբենի քարե ինքնատիպ պուրակը նոր մանրամասներով է լրացվելու: Այն վերածվելու է բաց երկնքի տակ քարե յուրօրինակ գրադարանի: Այստեղ կտեղադրվեն նաև մեր գրական մեծերի՝ Նարեկացու, Քուչակի քարե մատյանները: Նախապես սկսելու են շումերների հնագույն սեպագիր մատյաններից, նրանք, որոշ հետազոտողների վարկածով, Հայաստանից են ծագել:

Արդեն իսկ այբուբենի քարե տառերը մեր գրապաշտ ժողովուրդը ուխտատեղիի է վերածել: Այստեղ այցելածների առաջին

գործը տառերի առջև մոմեր վառելն է եղել: Տառերի հեղինակ, «Հայնախագիծ» ինստիտուտի ճարատարապետ, համոզմունքով ցեղապաշտ Ֆրեդ Աֆրիկյանը տառերի ստեղծման ժամանակ կիրառել է կորագիծ կամարների ճարտարապետական սկզբունքը, որ զանգվածեղ տառերը կպահպանի քամու, անձրևի տակ քայքայվելու վտանգից:

Նախնական պլաններով 15-20 մ տարածքի վրա եղևնիներ ու դեկորատիվ ծառեր կտնկվեն, իսկ այբուբեն հուշարձանի դիմաց որևէ ծառապատում չի լինի՝ հուշարձանի տեսանելիությունն առավելա-

գույնս ապահովելու և առավել սրտաբացություն հաղորդելու համար: Իսկ նմանօրինակ հուշարձանի նախադեպ, գոնե գրավոր հիշատակումների համաձայն, ոչ միայն մեր, այլև աշխարհի մշակութային պատմության մեջ չի արձանագրվել: Թերևս կարելի է միայն զուգահեռներ անցկացնել արաբեսկայի՝ տառերի միջոցով գեղարվեստական արժեքի ստեղծման հետ, որի հեղինակը եղել են արաբները: Նրանք ջնարակած արյունով տառեր են գրել, տառերից՝ բառեր և այս սկզբունքով նախշագարդել կառույցների պատերը:

Կ. Դ.

# ՀԱՅԻ ՏԵՄԱԿԸ

## Գնահատելու համար, չգիտես ինչու, սովորաբար առիթ է պետք: Իսկ Էդվարդ Խլղաթյանը իր անցած ճանապարհով մշտական գնահատանքի է արժանի:

Հայի մի տեսակ կա, **տակնի**, սերմացու տեսակը: Վիպերգուքյան մեջ Ջոջանց տան տղերքի, կյանքում՝ Սուշեղ սպարապետի ու Աղբյուր Սերոբի, Սողոմոն Աբովյանի ու Սամվել Հակոբյանի, գրականության մեջ՝ Ջորի Միրոյի, Նահապետի, Պավլեի ու Իշխանի տեսակն է դա, որ միմյանցից ձևով տարբեր են, էությանը՝ նման, և դժվար է գտնել, թե որտեղով է անցնում նախատիպի ու հերոսի սահմանագիծը: Էդ տեսակը՝ ազգի անաղարտ զենի ժառանգորդն է ու ժառանգողը, և դա է պատճառը, որ նայած ժամանակի հրամայականին, զենք կամ արոր, վրձին կամ գրիչ, բախ կամ բրիչ է վերցնում անմնացորդ նվիրվում է իր գործին:

Մշո Բուլանուղի Շեղաղուպ գյուղի գրագիր Հովհաննեսը, վտանգելով իր կյանքը, հարկահավաքներից գաղտնի, գիշերով, ետ էր վերադարձնում չքավորներից ծեծ ու ջարդով խլված ցորենը, և փայտե կնիքով չորս կողմից նորից կնքում էր շեղքը, որպեսզի թուրք ու քուրդ հարկահավաքներն առավոտյան արթնանալով գլխի չընկնեին:

Հովհաննեսի տղան՝ Ազատը, յաթաղանից մազապուրծ, մի կերպ բնավորվեց Լոռու Վարդանյու գյուղում: Ուսուցիչ էր, բայց գյուղում դպրոց չկար: Երեխաները Սեդրուտ գյուղի դպրոցում էին սովորում: Ազատը որոշեց դպրոց բացել գյուղում: Տեղացիներն օգնեցին,

այն ժամանակ, երբ եղածը՝ եղած է, անցածը՝ անցած: Կարճ ասած՝ գնա մեռի, արի՛ սիրեմ: Բայց այսր ինքը՝ Էդիկը, միշտ դեմ է հենց այդ բնույթին):

- Քանի մեր մայրերը կան, նրանց փառաբանել է պետք: Ուրիշ էլ ե՞րբ ենք խոնարհվելու նրանց առջև, համբուրելու նրանց ձեռքերը, եթե ոչ հիմա...

Որոշեց ու ամեն տարի Մայրերի տոն էր կազմակերպում Խնձորուտում: (Այն ժամանակ պետականորեն դեռ չէր նշվում Մայրերի օրը):

- Ես մեր սար ու ձորերը մինչև ե՞րբ պիտի թուրքանուն մնան... Հրավիրեց գյուղի ծերերին: Ջրուցեցին, վերհիշեցին, մոռացության փոշուց մաքրեցին, վերականգնեցին բացատի, աղբյուրի, արտավայրի ու բլրի նախաստեղծ անունները:

- Մենք մեր քաղաքի երախտավորներին պատվելը մոռացել ենք... Ու ստեղծեցին «Վանածորը սիրո քաղաք», «Դուդուկի արարիչը» հեռուստաժապավենները:

- Սա դեռ սկիզբն է, - խստացավ դուդուկի արարիչին՝ վաստակաշատ դուդուկահար Արտավազ Տեր-Հովհաննիսյանին...

Ստերմիկ շրջապատում գիտեն և այսօր էլ, ի լուր բոլորի ամեն



գավգործկոնը համաձայնվեց, պաշտպանեց առաջարկը: Դպրոցը հիմնեց ու վարժապետի չնչին աշխատավարձով գրիչ, մատիտ, տետր էր առնում, բաժանում իր սաներին...

Էդիկը՝ Ազատի տղան, բնատուր ավյուն-եռանդով, չցանկացավ Կիրովականի թաղամաս դարձած, բայց կենցաղով դեռ երկրագործ գյուղի «պատերի ներսում» մնալ, հաստատվեց հեռավոր Կալուգայում: Աշխատանքը եկամտաբեր էր, սեփական տուն էր կառուցել ու թվում էր, թե շեղաղուպի գաղթական Հովհաննեսի թողած ժողովուրդների եղբայրական ընտանիք - խորհրդային երկրում գտել է իր տեղը: Բայց 1988-ը ճակատագրի նոր էջ էր բացում կայսրության ու նրա ժողովուրդների կյանքում: Տերությունը փլուզվում էր, դարանակալ, դարավոր թշնամին՝ ազերի-թուրքը, մերկացրել էր ժամիքները...

Մշեցու արյունն ու հայի տեսակը արթնացան երակներում: Վաճառեց տունն ու զենք-զինամթերք ձեռք բերելով՝ շտապեց ծնրնդավայր: Համազուրկացի ընկերներով կազմավորած ջոկատը «Անի» կղզեցին և մեկնեցին Նոյեմբերյանի շրջան՝ սահմանները պաշտպանելու:

Հովհաննես - Ազատ հայի տեսակը բոլորվեց Էդիկով ու թվում էր, նրանցից ամեն մեկն արդեն արեց - ավարտեց իր գործը՝ հավատարիմ արյան կանչին: Բայց՝ չէ: Եթե սերմացու հատիկի բերքը սոսկ մեկ հատիկ է՝ հողի երկունքը զուր է եղել:

...Հոգնեցի: Գրածիս էպիկական ոճից հոգնեցի: Այսպես, սովորաբար, պատմում են ապրած-եղածի մասին՝ ի լուր նոր սերնդի, թե՛ իմացք սովորեք, այսպիսի շնորհաշատ նախնիներ եք ունեցել, իսկ դուք, ավարաներ, ի՞նչ եք անում, որ նմանվեք ձեր ապուպապերին: (Սա էլ երևի հայի բնույթ է՝ գնահատել ու փառաբանել



մայն պատասխանատվությամբ հայտարարում եմ. Էդիկը, վարդանվեցի Էդոն, իմ ընկերը՝ Վանածորի համայնքի ավագանու անդամ, «Հայփոստ» ՓԲԸ տեղի ղեկավարը, «Ֆրիտյոնֆ Նամսենի» հուշամեդալակիր Էդվարդ Խլղաթյանը՝ խենթ է: Հա, հա: Առանց կատակի:

Աշխարհը ցնորված է կոպեկը կոպեկի վրա դարսելու մարմաջով, իսկ ես խենթը նկարիչ Կապոյին կտավ է պատվիրում՝ գաղթական հայերը հայոց մասունք-մատյաններն են փրկում ճարակից: Եվ դե՞ «Կկազմակերպենք Անիի դարպասներից, մարդաշատ երթով, նկարը կբերենք Օիծեռնակաբերդ ու կնվիրենք Եղեռնի թանգարանին»:

Քանդակագործ Սևոյին պատվիրում է մոր հուշարձան կերտել: Եվ դե՞ «Հուշարձանը տեղադրվելու է Մայնեխի կատարին: Սրբությունները վեհ են, ու ամեն անարժան մարդ չպետք է հավի նրանց: Արձանին կնայենք հեռադիտակով, որն արդեն պատվիրել ու ստացել եմ Հովանդիայից»:

«Մայրերին նվիրված թանգարան եմ ստեղծելու: Դա առաջինը կլինի աշխարհում: Թող աշխարհն իմանա, որ հայերը զուր չեն իրենց լեզվին ու հողին «Մայր» ասում»... - դմնեղուռ ընկած կենցաղային իրեր, ձեռագրեր, լուսանկարներ ու մասունքներ է հավաքում ապագա թանգարանի ցուցադրության համար:

Հոգեհարազատ թեմաներով երգեր է պատվիրում գրել, ինքն էլ է հորհրում, շնորհալի երգիչներին սատարում, ծայնագրվում են այդ երգերով ու դրանք սփռում է Լոռու և հանրապետության եթերով մեկ... (Դրանք արդեն հարագատ ու սիրելի են հանրությանը):

Հրավիրեց «Հ2» հեռուստաստուդիայի «Հին ընկերների ակունքի» հեղինակներին. «Ընկերությունը Լոռուց է առաջա-

ցել», - ասաց ու տարեց համերկրացի ընկերների հրավիրելով նրանց նվիրեց հերթական հաղորդումը...

Փնտրեց գտավ «Կիլիկիա» նավի անձնակազմին: «Դուք հերոսություն եք արել: Մենք պարտավոր ենք պատվել ու փառաբանել ձեզ: Հրավիրում են Վանաձոր»:

Եվ դեռ ժամանակ է գտնում հոր Ազատ Խլղաթյանի անվան դպրոց այցելելու (հովանավորում է), իր ընտրողներին հանդիպելու, օգնելու, որ լուծվեն նրանց հիմնախնդիրները, մասնակցելու համայնքի ավագանու խորհրդակցություններին, գրողներին, նկարիչներին, երաժիշտներին, լրագրողներին տեսակցելու, հյուրընկալելու հյուրախաղերի եկած տաղանավոր համույթի կամ թատերախմբի, հասնել Նոյեմբերյան ու Նվիրատվություններ տանել զոհված զինակիցների ընտանիքներին կամ մասնակցել զոհված ընկերոջ որդու ընթացման մրցաշարին, մինչև ուշ գիշեր հյուրեր ընդունել, առավոտյան վաղ, առանց հանգստյան օրերի

աշխատանքի գնալ, զբաղվել թռռնիկով ու ընտանիքի կենցաղային հարցերով, մասնակցել համաքաղաքային միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը... Խե՛նք չէ, ի՛նչ է... Տաղանավոր խենք, հայի օժտված տեսակ, հազվադեպ, բայց՝ սերմացու...

Այդպես լինում, այդպես ապրում են, երբ գիտակցաբար, ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ու խորունկ են սիրում հայրենիքը, ժողովրդին, ծննդավայրը, երբ ծնված են լինում ոչ թե զույգերի պատահական անհրաժեշտ վարքից, այլ սիրուց, մեծ սիրուց: (Իր իսկ խոսքերն են՝ մի քիչ մեղմացրած):

Ու հիմա պարզվում է, որ 50 տարեկան է...

**Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ**

**Հ.Գ.** Հեղինակը ի սրտե շնորհավորում է իր անփոխարինելի ընկերոջ 50-ամյակը և խոստանում նրա 150-ամյակի քեֆի թանադան լինել:

# Տիգրան Սիմոնյանը Հայաստանի պատանիների չեմպիոն

Երևանում՝ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանն ավարտված 33 2005 թ. պատանիների և աղջիկների եզրույթակիչ առաջնություններում, հինգական տարիքային խմբերում որոշվեցին հաղթողները: Որոշվեցին այն շախմատիստները, ովքեր մեր երկիրը կներկայացնեն հուլիսին Ֆրանսիայում կայանալիք աշխարհի և օգոստոսին Սերբիայում մեկնարկվող Եվրոպայի առաջնություններում: Լոռու մարզի 26 շախմատիստներ ներկայացնում էին Վանաձորի թիվ 7 համալիր, ինչպես նաև «Տարոն» համալիր մարզադպրոցները, Սպիտակի ու Տաշիրի շախմատային կրթօջախները:



**Չախից՝ Տիգրան Սիմոնյանը**

կից-մրցակիցներին գերազանցեց դիմացկունությամբ ու ամուր նյարդերով:

Այնքան է, որ Վանաձորում աճում է հեռանկարային մի շախմատիստ ևս, որը, հուսանք, վաղվա մեր պարծանքներից է լինելու:

Հավանաբար, գոյություն ունեն մարզչական տաղանդի խիստ որոշակի չափանիշներ, որոնց մեջ, իմ պատկերացմամբ, բնավ էլ երկրորդական դեր չեն խաղում մարզիչին բնութագրող մի շարք հատկանիշներ. որքանով է նա նվիրված իր գործին, սիրուն է արդյոք երեխաներին, օժտված է մանկավարժական բնատուր ծիրքով:

Պատահական չէ, որ բազում են օրինակները, երբ անվանի շատ շախմատիստներ, զուրկ լինելով նշված բարեմասնություններից, իբրև մարզիչ՝ հայտնվել են «կոտրած տաշտակի» առջև: Եվ հակառակը, շախմատային ավելի համեստ որակավորումներով շատ մարզիչներ լուրջ հաջողություններ են արձանագրել իրենց գործունեության մեջ, քանի որ ի գործու են եղել տեսնել դեպի սաների հոգին տանող ճանապարհը: Նրանցից մեկն էլ մեր նորընծա չեմպիոնի մարզիչ Արշակ

Ռամազյանն է:

Նա հավատացած է, որ բոլոր երեխաներն էլ ունեն ընդունակություններ, որոնք, պարզապես, կարիք են զգուժ բացահայտման:

Հենց նրա հետ էլ ունեցանք այս փոքրիկ հարցազրույցը:

- Կցանկանայինք, որ մարզիչը ներկայացներ իր սանին, նրա կարողությունները շախմատում:

- Տիգրանի ամենամեծ առավելությունը նրա կամքի մեծ ուժն է: Կայացած շախմատիստ դառնալու համար, ինչպես Սիխայիլ Բոտվինիկը կասեր, պետք է երեք հատկանիշ՝ աշխատասիրություն, կամքի ուժ, բնատուր տաղանդ: Այս համամասնությունները աստօժ կողմից այս պատանուն տրված են: Այսինքն կա ներուժ, մեծ պոտենցիալ: Մնում է հղկվել: Դե, իսկ տարեկան 2-3 միջազգային մրցաշարերը իրենց դրական ազդեցությունը կունենան Տիգրանի խաղամակարդակի վրա:

- Ի՞նչ կարծիքի եք. Տիգրանը իզորով է գալիք մրցաշարերում ավելի բարդ խնդիրներ լուծելու:

- Աշխարհի առաջնությանը կմասնակցեն Տիգրանին հասակակից 100-120 պատանի շախմատիստներ, մասնավորապես չինական, հնդկական, նախկին խորհրդային միության շախմատի դպրոցներից: Առաջին տասնյակում տեղ գրավելն արդեն մեծ հաջողություն են համարում:

«Գործարար»-ն էլ իր երթին ցանկանում է նորանոր բարձունքներ Տիգրան Սիմոնյանին ու նրա մարզիչ Արշակ Ռամազյանին առաջիկա մրցաշարերում:

**ՏԼՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ԱՆՎՐԱՆԻԿԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ**  
Հունիսի 4-ին, Փարիզից ոչ հեռու գտնվող Պլեսի-Ռոբեմսոն քաղաքի կենտրոնական զբոսայգում Հայաստանի դեսպան Էդվարդ Նալբանդյանը և Ֆրանսիայի Աժ պատգամավոր, քաղաքապետ Ֆիլիպ Պեմբեկը հանդիսավորությամբ բացել են գորավար Անդրանիկի արձանը:

**ՆՈՐ ԶՎԵՐԾ**  
Հունիսի 4-ին «Արմավիա» ավիաընկերությունն առաջին անգամ իրականացրել է նոր կանոնավոր չվերթ՝ Երևան-Տաշքենդ-Երևան ուղղությամբ: Հետագայում այդ ուղղությամբ թռիչքները կիրականացվեն շաբաթը մեկ անգամ (շաբաթ օրը) A-320 ինքնաթիռներով: Թռիչքը Երևանից կկատարվի ժամը 22:30-ին, Տաշքենդից՝ ժամը 03:05-ին (տեղական ժամանակով): Ինքնաթիռը Երևանում կլինի ժամը 06:35-ին:

**ԱՐՄԵՆՊԵՏ**

**ԴՈՒԴՈՒԿԸ՝ «ՄԵՏԱՔՍԻ ԴԱՆՆՊԱՐՀՈՒՄ»**  
Աշխարհահռչակ «Սոնի կլասիկ» ֆիրման Նյու Յորքի հայտնի «Ռայթ թրեք» ձայնագրման ստուդիայում թողարկել է «Մետաքսի ճանապարհը» անսամբլի երրորդ CD-ն, որտեղ ընդգրկված են տարբեր ազգերի կոմպոզիտորների 16 ստեղծագործություններ: Ինչպես տեղեկացրեց ճանաչված դուրլոկահար Գևորգ Դաբաղյանը, դա չիև համրահայտ թավջութակահար Յո-յո Մայի նախագիծն է, որտեղ ընդգրկված տարբեր ազգերի ժողովրդական նվագարաններով նվագող 30 երաժիշտները ներկայացնում են աշխարհում մետաքսի արտադրության շնորհիվ հայտնի դարձած «մետաքսի ճանապարհի» երկրները (Ճապոնիա, Չինաստան, Մոնղոլիա, Հնդկաստան, Հայաստան, Արբեջան, Իրան և այլն): Դուրլոկահարը տեղեկացրեց նաև, որ նշված երկրներում նախատեսված են հիշյալ անսամբլի հյուրախաղերը: Հայ ունկնդիրը «Մետաքսի ճանապարհի» հետ շփվելու հնարավորություն կունենա միայն 2007-ին:

# ՀԱՅ ԱՆՎԱՆԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ «ՃԻՏԻՆ ՊԱՐՏՔԸ»

«Ձեր նախնիները զավթեցին մեր երկիրը՝ Հայաստանը 1071 թվին և ատելության, նախանձի ու կրոնական մոլեռանդության հետևանքով վարվեցին մեզ հետ որպես «գյավուրների»՝ անհավատների, մինչև այդ մոլեռանդությունը հասավ իր գագաթնակետին՝ 1915-ի ցեղասպանությանը: Դուք պատմական Հայաստանը, որտեղ ապրում էք այժմ, վերածեցիք հսկայական գերեզմանատան: Ձեր շարունակական ժխտումները չեն կարող ջնջել անհերքելի փաստերը: Հայրուրավոր օտար ականատեսներ բողոքի ձայն են բարձրացրել: Նրանք այդ կոտորածների մասին հայտարարել են այն ժամանակվա թերթերում, իրենց երկրների համապատասխան խորհրդարաններում և հետագայում լույս ընծայված բազում գրքերում: Ոճրագործության ժխտումը նույնքան ծանր հանցագործություն է, որքան ոճրագործության կատարումը»: «Վերապրողի ողբը» ստորագրությամբ օսմանյան թուրքերին և նրանց հետնորդներին ուղղված այս խոսքերով է բացվում տորոնտոյաբնակ (Կանադա), Արամի դեղագործ և հասարակական գործիչ դոկտ. Ժիրայր Փետերյանի «Հայկական կոտորածները դարերի ընթացքում ընդհուպ 1915-ի ցեղասպանությունը» գիրքը, որը Հայոց մեծ եղեռնի 90-ամյակի նախօրյակին լույս է տեսել Տորոնտոյում:

Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում պատմական ակնարկ է թուրքերի կողմից հայկական հողերի զավթման, իսլամական ծայրահեղականության աճի, ցեղասպանության նախապատրաստության և վերջապես գործադրման վերաբերյալ: Դրան հետևում են Առնոլդ Թոյնբի, Արմին Վեգների, Հենրի Սորգենթաուի, Ֆրիտյոֆ Նանսենի, Յոհաննես Լեփսիուսի և այլոց վկայությունները: Երկրորդ մասում պատմական Հայաստանի քաղաքների (Տիգրանակերտ, Էրզրում, Կարս, Վան, Մուշ, Կեսարիա, Ադանա, Բիթլիս և այլն) հակիրճ պատմությունն է 1915-ից առաջ և հետո: Նշված են կրոնական և մշակութային կենտրոնների ավերածությունները: Հատկանշական են միջազգային ճանաչված հեղինակներից մեջբերումները, որոնցից տեղեկանում ենք, օրինակ, որ Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքարանի 1901-1902-ի տվյալներով Թուրքիայում գործել են 803 հայկական դպրոցներ, ընդհանուր առմամբ 2.088 ուսուցիչներով և 81.226 աշակերտներով (59.513 տղաներ և 27.713 աղջիկներ) և 2050 եկեղեցիներ, 203 մենաստաններ՝ չհաշված Կոստանդնուպոլսի 38 եկեղեցիները: Հատկանշական են նաև գրքի վերջում կանադական այդ ժամանակվա մամուլից բերված օրինակները: Դրանցում նշվում են «կոտորած» (massacre), բնաջնջում (extermination), սիստեմատիկ (ծնով) սպանվածներ

(systematically murdered) բառերը: Ուշադրության արժանի է «Մոնրեալ դեյլի սթար» թերթի 1915 թ. սեպտեմբերի 18-ի լուրը, որտեղ Պետերբուրգից թղթակիցը հարդորում է Վանի միսիոներական անձնակազմի «Արարատ» ֆիլմում հանդես եկող դոկտ. Քլարենս Աշերի, պրն և տկն Յարոնների և 13 այլոց փախուստը Պետերբուրգի միջով դեպի Բերգեն (Նորվեգիա): Շտապ փախուստի ճանապարհին տկն Ռեյնոլդսը ոտքն է ջարդել և Թիֆլիսում մահացել, տկն Աշերը մահացել է տիֆից: Կոտորածները, ըստ նրանց, ղեկավարել է Ջևդեթ Բեյը: Տորոնտոյում հրատարակվող մեկ ուրիշ թերթ՝ «Գլոբը», վկայակոչել է օգոստոսի 19-ի կոտորածները Ուրֆայում: «Օտտավա իվնինգ ջոնլը» հաղորդել է, որ թուրքերն աստիճանաբար և արդյունավետ բնաջնջում են հայերին, որի հետևանքում հայ մայրերը եփրատ գետն են գցում իրենց երեխաներին՝ փրկելու համար նրանց թուրքական տանջանքներից: Հոդվածներում բազմիցս նշված են «անասելի ուստանություն», «չգերազանցված սարսափ», «անկարելի է նկարագրել անզեն քրիստոնյաների կրած տանջանքները» նախադասությունները: 22 էջանոց հատորը հարուստ է քարտեզներով և լուսանկարներով:

Հեղինակ ժիրայր Փետերյանը ծնվել է Վերին Եգիպտոսի Մալուխի քաղաքում: Հայկական, հունական և ֆրանսիական վարժարաններում միջնակարգ կրթությունը ավարտելուց հետո դեղագործության բակալավրի աստիճան է ստացել Կահիրեի համալսարանից: 1962 թ. Կանադա տեղափոխվելով հաստատվել է Տորոնտոյում: Հնագույն պատմության, մշակույթների և լեզուների հանդես իր սերն ու հետաքրքրությունները մղել են նրան խորանալու իրն Եգիպտոսի պատմության և կրոնների համեմատական ուսումնասիրությունների մեջ: Նա հիմնադիրներից է Վարդանանց ասպետների կազմակերպության Տորոնտոյի մասնաճյուղի:

Հեղինակել է նաև «Հայաստանը արաբական տիրապետության տակ: 640-886 թթ.» (1993 թ.) և «Հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ ակնարկների (էսսեների) հավաքածու» (1995 թ.) հատորները: Առաջինում արխիվային նյութերի հիման վրա Սա Նոր լույս է սփռում Հայաստանի արաբական տիրապետության երկուսուկես դարերի պատմության վրա: Իսկ երկրորդում ի մի են բերված «Նոր սերունդ» և «Ապագայ» թերթերում իր գրած հոդվածները: Անզերեմով գրված այս երեք գրքերը մեր պատմությունն օտարների ծանոթացնելու խիստ արժեքավոր աղբյուրներ են, մասնավորապես դր փաստերը ներկայացված են մատչելի և հսկիործ ձևով:

Հակոբ ՃՈՒԼԻԿՅԱՆ

## ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ ԸՆՏՐԵԼ Է ՆՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Համաձայն Հայ ոսկերիչների ասոցիացիայի լրատվության բաժնի տեղեկության, ամեն տարի Շվեյցարիայի Բազել քաղաքում ապրիլին տեղի են ունենում ոսկերիչների հավաք ու ոլորտի արտադրանքի ցուցահանդես: Դրանց մասնակցում են նաև հայեր աշխարհի տարբեր երկրներից: Երկու տարին մեկ Հայ ոսկերիչների ասոցիացիայի սփյուռքի և Հայաստանի պատվիրակները մասնակցում են ասոցիացիայի գլխավոր ասամբլեային՝ ընտրելով նաև Նոր միջազգային խորհուրդ երկու տարի ժամկետով:

Ասամբլեայի պատվավոր հյուր էր առևտրի և զարգացման փոխնախարար Գագիկ Մկրտչյանը: Հանդիպման ընթացքում մասնակիցներն ընտրեցին միջազգային գործադիր խորհրդի 13 անդամի: Խորհրդի նախագահ է ընտրվել Արա Բարմակյանը (ԱՄՆ Արևելյան ափ), փոխնախագահ՝ Գագիկ Աբրահամյանը (Հայաստան): Ընտրված խորհրդի և ասամբլեայի կարևոր որոշումներից է եղել տեղափոխել ասոցիացիայի քարտուղարությունը Միացյալ Նահանգների Արևելյան ափ: Ըստ խորհրդի նախագահ ընտրված Արա Բարմակյանի, պատճառն այն է, որ Միացյալ Նահանգներում է ապրում հայ ոսկերիչների մեծամասնությունը՝ մոտ 3000, որոնց զգալի մասը վերջին տասնամյակներին Միացյալ Նահանգներ տեղափոխվածներն են:

Ինչպես որոշվել է ասամբլեայում, խնդիր է դրված հայ ոսկերիչներին հնարավորություն տալ ավելի հստակ պատկերացնելու բիզնես կապերն ու ոսկերչության համաշխարհային շուկան: Բացի այդ, հնարավորության սահմաններում կտրամադրվի նաև աջակցություն խորհրդատվության կարգով:

Ըստ խորհրդի փոխնախագահ Գագիկ Աբրահամյանի, վերջինս աջակցություն կցուցաբերի ռուսաստանյան շուկա մուտք գործելու և բիզնես կապեր զարգացնելու հարցում՝ միևնույն ժամանակ, բարձրացնելով Հայաստանի վարկանիշը միջազգային ասպարեզում: Պրն Աբրահամյանը կարևորել է նաև Հայաստան-սփյուռք կապերը, նշելով, թե համաձայն իր նշանաբանի, սփյուռքը Հայաստանի կարիքն ունի և հակառակը:

Ա. Հ.

• Մայիսի 28-ին՝ Առաջին հանրապետության օրը, նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, աշխարհառեչակ երգիչ Շառլ Ազնավուրը, պաշտոնական այլ անձինք, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ այցելեցին Սարդարապատի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու հերոսամարտում ընկած զինվորների հիշատակին: «Սա մեր վերածննդի տոնն է, որ համաժողովրդական տոն է: Ամեն ինչ պետք է անենք, որ այս տրամադրությունը պահպանվի ոչ միայն այսօր, այլև ամբողջ տարին: Մեր աշխատանքով», - դիմելով ներկաներին՝ ասել է ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը:

# Մտեղծագործում են մեր ընթերցողները

## Ալվինա ՓՄՇԻՆՅԱՆ



### ՀԱՅՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Հայրական տուն՝ միշտ ժպտաղետ ու գրկաբաց  
 Խոնարհվում են ես քո առաջ:  
 Հնացել ու ծերացել են պատերը քո,  
 Խունացել ու տեղ-տեղ թափվել ծեփերը քո,  
 Բայց դու կրկին ջերմ ու ուրախ  
 Ընդունում ես և ուստերիդ և դուստրերիդ:  
 Լինես տխուր, լինես ուրախ,  
 Լինես հարուստ, լինես աղքատ,  
 Սեղանիդ կա միշտ աղ ու հաց:  
 Քո գրկի մեջ ջերմանում ենք,  
 մանկանում ենք,  
 Հոգու ցավը, տառապանքը մոռանում ենք  
 Մեր աչքերը պայծառանում  
 Արցունքները չորանում են:  
 Հրաշք ես դու՝ հայրական տուն  
 Կախարդանք կա քո պատերում:  
 Թեկուզ անցնեն շատ տարիներ,  
 Թեկուզ լինեն ես ծերունի  
 Կրկին-կրկին հազար անգամ  
 Կխոնարհվեմ ես քո առաջ:

### ՎԵՐՀՈՒՐ ԾՆՆԳՅԱՆ

Որքան հյուրեր են հավաքվել այսօր.  
 Որքան երջանիկ, ժպտացող դեմքեր:  
 Եվ այդ ժպիտի, ուրախության  
 Առիթը այսօր կարծես թե ես եմ:  
 Զգիտեմ ինչու բոլորից տխուր  
 Ես ինքս եմ այսօր:  
 Եվ իսկապես, ուրախանա՞լ՝ ինչու՞  
 Որ մեծացել եմ նորից մեկ տարով,  
 Որ մի նոր կնճիռ, ճերմակ մազափունջ,  
 Ավելացել են դեմքիս ու գլխիս,  
 Որ քանի գնում ուսուսումնում եմ,  
 Մարմնով ու հոգով ես մեծանում եմ,  
 Որ տարիները իրենց գործն անում,  
 Եվ ծիծաղում են թաքուն ինձ վրա.  
 Որ քիչ էլ անցնի առանց ձեռնափայտ  
 քայլել չեմ կարող  
 Եվ մի ավելորդ բեռ եմ դառնալու:  
 Իմ ծննդյան տարելիցին  
 Թողեք, որ ես չուրախանամ:  
 Քանզի ծննդյան ամեն տարելից  
 Ինձ ավելի է մեծացնում  
 Եվ ծերության շեմ քարշ տալիս:  
 Իսկ մեծապատիվ այդ ծերությունը  
 Իր դաժանությամբ ծանր է ավելի  
 Քան մահապարտին դատապարտելը:  
 Ո՛չ թե խմենք իմ կենացը,  
 Այլև ասենք մեկս մյուսին.  
 - Թող, որ աստված ջախել պահի,  
 Մեր սրտերն ու մեր հոգին:

### ՆՈՐԸ ԼԱՎ Է

Ամեն ինչի նորը լավ է:  
 Նորով կարծես նորանում ենք  
 Նորով՝ հիմը մոռանում ենք:  
 Սակայն որքան նորով տարվենք  
 Եվ որքան էլ մենք նորանանք,  
 Կա մի քաղցր ու անուշ հուշ,

Որ մեզ միայն հիմն է հուշում:  
 Մուշի, Վանի, Արդահանի  
 Կորուստները մեր հայկական  
 տարածքների,  
 Ժողովրդի սև եղեռնը անօրինակ  
 Մեր սրտերը խցող փուշ են  
 Թեկուզ տխուր, բայց թե հինգ եկող հուշ են:  
 Մեր անցյալը դառն ու տխուր,  
 Թավիչ մամռե գորգով պատվել,  
 Բայց մեր սրտում սուրբ, սրբատառ,  
 Մասունքներ են հիմա դարձել:  
 Խաչքարերն ու շիրիմները նախնիների:  
 Ամեն ինչի նորը լավ է,  
 Ընկերոջ, բարեկամի  
 Եվ պապական օջախների  
 Հիմը կարծես նորից լավ է:  
 Այս նոր կյանքը խառն ու շփոթ  
 Վազը է կարծես ազահության:  
 Որ մոռացած ամեն բարին  
 Ոսկու փայլով տարված, գերված  
 Գողանում են, սպանում ու անարգում են  
 Ծնող, ընկեր և հայրենիք  
 Սուրբ բաները մոռանում են:  
 Մի՞թե նորի լավը այս է:  
 Կանգ առ, էյ դու, նոր կոչվածո,  
 Եթե պետք է նորանալով,  
 Ապականես ու մոլության դատապարտես,  
 Եթե պետք է ազահության այս քառսում  
 Քո արգանդից ծնես մարդակերպ  
 վիշապներ,  
 Կանգ առ, եթե աստված ունես:  
 Պետք չէ նորը՝ ապականված  
 Պետք չէ նորը՝ մորն ուրացած:  
 Նման դեպքում լավ է հիմը  
 Որ իր քաղցրիկ, հուշիկ քայլով  
 Միշտ թակում է տխուր սրտիս պատուհանը,  
 Իր անուշիկ օրորներով հիշեցնում է,  
 Եվ արթնացնում անցած հիմը:  
 Հիմը, որը հարգել գիտեր,  
 Հիմը, որը մեծին փոքրից  
 Ձանազանել, սիրել գիտեր,  
 Եվ վերջապես մայր հայրենիք  
 Այդ մեծ գանձին  
 Պահել, պաշտել, տիրել գիտեր:

### ԽՈՍՈՒՆ ՔԱՐԵՐ

Քարաստան են ասել հնուց Հայաստանին.  
 Այստեղ այնտեղ քարակույտեր,  
 Բայց ի՞նչ քարեր...  
 Փոթորկում կա այդ թափփված քարերի մեջ,  
 Գիչ, աղաղակ, արձագանք կա  
 Խու՛լ, ցավագին:  
 Սարսուռ կանցնի մարմնիդ միջով  
 Երբ որ նայես այդ քարերին:  
 Բայց և այնպես, երբ ոտք դնես  
 Կջերմանա հոգով, մարմնով:  
 Ծանր, անշարժ ու անշունչ են,  
 Բայց արի լես աչքեր ունեն  
 Եվ գարնացած նայում են քեզ,  
 Երբ ուզում ես լքել նրանց  
 Եվ մոռանալ այդ քարերը:  
 Սակայն որքան հեռանում ես  
 Էլ ավելի ուժգնորեն դու փնտրում ես  
 Եվ կարոտում հայ քարերը.  
 Հրաբուրբը, բոսորագույն, սեզ սարերը  
 Եվ արյունով թրծված, հունցված  
 Մեր պապերի խաչքարերը:

### ԽՈՂ ՓԻԼԻՍՈՓՈՒՄԱՅԱԿԱՆ

Լրացավ ահա հիսուն տարիս:  
 Հիսուն տարում, հիսուն նույնիսկ ավելի  
 անգամ  
 Եղել եմ պահեր, որ զոջացել են  
 Լույս աշխարհ գալուս, ծնվելուս համար:  
 Եվ ամեն տարի, ամեն նոր գարուն  
 Իր վրձնի հետքով թողել է մի հուշ  
 Տխուր, թե ուրախ մի անմոռաց պահ:  
 Հիսուն տարվա կյանքի գութանը  
 Ակոս է արել,  
 Եվ կնճիռներ է շաղ տվել դեմքիս:  
 Հիսուն տարվա սերմնացան փերիս  
 Սկզբում մոխիր, ապա նաև ծյուն  
 ճերմակ ու անբիծ  
 Անխնա փռել գլխիս մազերին:  
 Անցել են տարիները երազի նման:  
 Եվ ամեն տարի, երբ մեծացել եմ,  
 Իմաստացել մեկական տարով  
 Աչքս զցել եմ ոչ դեպի առաջ՝  
 Այլ ցանկացել եմ գնալ դեպի ետ,  
 Լինել մի մանուկ անհոգ ու ուրախ  
 Լինել մի փոքրիկ անվիշտ ու անբիծ:  
 Ու թե իմ կյանքում ափսոսացել եմ ինչ որ  
 մի բանի  
 Ապա դա միայն մանկությունն է:  
 Քանզի որքան այն դժվար է եղել  
 Փշոտ, տատասկոտ, քարոտ, ծուռ ու մուռ,  
 Անցել են շատ հեշտ և չեմ վիատվել  
 Հաղթահարել եմ անանցանելիս  
 Եվ հաղթանակած կանգնել բարձրունքին.  
 Երազում եմ այդ մանկության ճամփան,  
 Սակայն անդարձ է այդ ճանապարհը:

# Մտեղծագործում են մեր ընթերցողները

## Մամվել ԱՎԴԱԼՅԱՆ

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ» ՇԱՐՔԻՑ (Ծրագրային)

Խառնամբուխի կամքին հլու ես չեմ վազի  
 անհայտության ճանապարհով,  
 Կուլ չեմ գնա սին հավատքին ու չեմ ապրի խղճուկ օրով,  
 Բեմի վերջին, անշուք դերով,  
 Փշրանքներով  
 Մեր հերթական աստվածների ցոփ սեղանից:  
 Ճիշտ են ասում, սիրտս խառնում է նրանից,  
 Երբ տեսնում եմ պատվանդանից  
 Կուռքը գահընկեց արողին,  
 Հանկարծահաս փոթորիկից դավանանքը ուրացողին,  
 Գիշերային կողոպուտից առատածեռն դարձած գողին:

Անկարող եմ արդեն նայել  
 Սատանայի դեմքը ծածկող սուրբ դիմակին,  
 Իմաստունի շորեր հագած խեղկատակին,  
 Արաբական երիվարի սանձը ծամող ավանակին:

Զէ՛, չեմ ուզում ես խոնարիվել մեր սրբապիղծ ժամանակին...

### ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ» ՇԱՐՔԻՑ

#### Հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին

Ես իմ անուշ Հայաստանի աստվածաշունչ բառն եմ սիրում,  
 Սուրբ Մեսրոպի մտքով ծնված երկաթագիր տառն եմ սիրում,  
 Մեր սարերի ալախական մանուշակի բույրը վառման,  
 Ու նորածին մանուկների աչիկների փայլն եմ սիրում:

Սիրում եմ մեր ծիրանենին, իր քաղցրանուշ բարից ճկված,  
 Քամիներին չխոնարիվող մեր հին բարդին երկնասլաց,  
 Երկարամազ լացող ուռին, հայոց վշտի բեռից կքված,  
 Ու վարդագույն գինու աղբյուր մեր խաղողի վազն եմ սիրում:

Սիրում եմ ես մեր քոչարին, պարը վահան ու սուսերի,  
 Միտքը հայոց ստեղծարար, հենարանը մեր հույսերի,  
 Հազար ու վեց հարյուր տարվա ճանապարհը մեր գրերի,  
 Ու խունացած մատյանների սրտածնվիկ տառն եմ սիրում:


Ուր էլ լինեմ, հետ եմ գալու, խմելու եմ ջրերը մեր,  
 Չեմ թողնի, որ ամայանան նորեն լքված շեները մեր,  
 Ինչքան էլ որ հիմքը փորեն դյուցազնակերտ բերդերը մեր,  
 Էլի ես ժիր ու անվարան, հայ-շինարար ձեռքն եմ սիրում:

Մեր փորձության ժամն է հասել, նահանջելու էլ տեղ չկա՛,  
 Օտար հողում սրտիս համար մխիթարանք ու դեղ չկա՛,  
 Աշխարհ անցիր, Հայկյան ցեղից խոռվարար էլ ցեղ չկա՛,  
 Ինչպես անհաս փառքի ճամփա՛ ես Չարենցի սազն եմ սիրում:

#### ԲԵՍԱՄԵ ՄՈՒՉՈ

Բեսամե, բեսամե մուչո,  
 Իններորդ ալիքը մեղմորեն օրորեց մեզ,  
 Մայրամուտի շողերի միջից  
 Ջրահարսը ժպտաց ու սիրո երգ տվեց մեզ:

Մեր սիրո տաճարի դռները բացվեցին  
 Ու քեզ հետ ներս մտա ես,  
 Սաթնու փայլով էր աշխարհը ողողված  
 Ու ողջունում էր նա մեզ:



#### ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Մամվել Ավդալյանը ծնվել է 1960 թ. Էջմիածնի շրջանի Հայկաշեն գյուղում: Սովորել է Երևանի համալսարանին կից ֆիզ-մաթ դպրոցում, ավարտել է Մոսկվայի Կառավարման ինստիտուտը (Московский институт управления), աշխատել է Հայաստանի ավտոտրանսպորտի մինիստրության կառուցվածքներում, 1993 թվականից ապրում է Մոսկվայում:

Ստեղծագործել սկսել է 2000 թվականից: Գրում է բանաստեղծություններ, քառյակներ, պատմվածքներ, հումորային պատումներ, պարոդիաներ, երգեր: Ընթացքի մեջ են կինոսցենարն ու դրաման: Պլանի մեջ է պատմական վեպը:

Ստեղծագործությունները պլանավորում է հրատարակել առաջիկայում (սեպտեմբերից) Մոսկվայում լույս տեսնվելիք սեփական գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ու երգիծական հանդեսում:

Գրականությունում Բայրոնի երկրպագուն է: Երազում է լսել Հայկական հեռուստատեսությամբ սեփական բանաստեղծությունները Վլադիմիր Աբաջյանի կատարմամբ:

Որևէ գրական միության անդամ չի հանդիսանում: Բանաստեղծի կամ գրողի կոչմանը չի հավակնում:

Բեսամե, բեսամե մուչո,  
 Ալիքներն են զարկում վիրավոր իմ կրծքին սեպ,  
 Մենավոր իմ սրտում մնաց  
 Վաղորդյան անուրջներով ցողված մի սիրավեպ:

Մեր սիրո տաճարի զանգերը լռեցին,  
 Ու մենակ դուրս եկա ես,  
 Վերջին դողանջի հետ հույսերս մարեցին  
 Սիրտս խամրեց սիրակեզ:

# Հայրենիքից վտարվածները



«Մենք չընդունեցինք նրանց կեղտոտ սովորույթները, եկեղեցու պատվիրանները: Դրա համար էլ մեզ վճռեցին այնտեղից»,-մոլոկանների պատմությունն է ներկայացնում ֆիլիստովցի 95-ամյա Իվան Նիկոլայիչը: Լոռու մարզի Ֆիլիստով գյուղի բնակիչները սրբությամբ են պահպանում նախնիների

ավանդույթներն ու հետևում կրոնական իրենց գաղափարախոսությանը: Այդ գաղափարախոսության պատճառով ավելի քան երկու դար առաջ Ռուսաստանի Եկատերինա երկրորդ թագուհին Տամբովի շրջանից վտարեց մի քանի ընտանիքների:

Աստված ուղղորդեց նրանց դեպի բիբլիական Արարատը: Հայաստանի հյուսիսային շրջանը նրանք հարմար գտան բնակության համար: Հաստատվեցին ու յոթ ընտանիքից բաղկացած համայնք ստեղծեցին: Տներ կառուցեցին, հողը սկսեցին մշակել ու օտար հողում արմատներ զգեցին: Հայրենիքից վտարված ռուսներին մեծ աջակցություն ցուցաբերեց մոտակա ռուսական զորամասում ծառայող Նիկիտին անունով մի հրամանատար: Նրա անունն էլ հավերժացրին բնակավայրն անվանելով Նիկիտին:



Իվան Նիկոլայիչը ծնվել է Ֆիլիստովոյում: Մասնակցել է երկրորդ աշխարհամարտին ու վիրավորվել ձեռքից: Պատերազմել է Կերչում որպես ավազ սերժանտ: Այդ տարիների միակ վկան բազմաթիվ շքանշաններն են ու պատերազմի վետերանի կոչումը: 95-ամյա մոլոկանն ընտանիքը պահել է կաղամբ, կարտոֆիլ ու գազար աճեցնելով: Դրանք վաճառել է դրկից հայերին: Վեց երեխա է ունեցել, որոնց փոխանցել է մոլոկանների կրոնական գլխավոր ուղղության «պոստոյանիներին» ավանդույթները:

«Մեր և հայկական կրոնի միջև որոշ նմանություններ կան, -ասում է Իվան Նիկոլայիչը, - նույն Ավետարանն է, նույն Աստվածը»:

«Քրիստոնյա մոլոկաններն» ուղղափառ եկեղեցուն չեն դավանում: Մոլոկանության հիմնադիրը Սենյոն Ուլլեիմն է: Նրանց դավանանքի հիմքում ընկած է Աստծո խոսքը, իսկ եկեղեցին, սրբապատկերներն ու խաչը նրանց համար ընդամենը քարից կամ փայտից պատրաստված իրեր են:



«Մոլոկան» անվանումը կապում են ավետարանական «հոգեվոր կաթի» իրենց քարոզած Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքի, ինչպես նաև պասի օրերին կաթ խմելու սովորույթի հետ: Մոլոկանները մերժում են կուսակրոնությունը, սրբերի ու խաչի պաշտամունքը, արտաքին ծիսակատարությունները, ինչն էլ հարուցել է եկատերինա թագուհու զայրույթը:

Հայաստան եկած առաջին մոլոկանները պատկանում էին «պոստոյանի» (մշտական) ուղղության: Նրանց տոները նման են եկեղեցական տոներին: Համաձայն Ավետարանի՝ նրանք նշում են և՛ Սուրբ Ծնունդը, և՛ Ջատիկը, և՛ Մեռելոցը: Եկեղեցի չեն գնում: Մոլոկանների հավաքատեղին սովորական ժողովատուն է՝ առանց արտաքին հարդարանքների: Նրանք այնտեղ ամեն կիրակի ընթերցում են Ավետարանը, աղթում, երգում կրոնական երգեր:

Մոլոկանների մյուս երկու ուղղությունները բնույթով նման են

միմյանց: Մաքսիմիստներին (ծայրահեղականներ) համարում են կրոնական փոխզիջումների չզնացողներ, որոնց կենսակերպի հիմքում ընկած է կրոնը: Դրանից հրաժարվելու դեպքում նույնիսկ պատիժներ են նախատեսվում: Պրիզուսներին (ցատկողներ) հատուկ է ահեղ դատաստանի, աշխարհի վերջի, երկրի վրա Աստծո հազարամյա թագավորության մասին ուսմունքի գաղափարներ տարածելը: Նրանց



աղոթքներն ուղեկցվում են ցնցումներով, ցատկերով: Այս ուղղություններից յուրաքանչյուրի ծեսերը տարբերվում են միմյանցից: Նրանք նաև տարբեր ժողովատներ ունեն: Յուրաքանչյուր ուղղություն ունի իր առաջնորդը՝ «լուսավորիչը»: Հոգևոր առաջնորդի պարտականությունները փոխանցվում են ժառանգաբար, կամ էլ ընտրում է տվյալ համայնքը՝ հաշվի առնելով ամծի առաքինություններն ու հավատարմությունը կրոնական ուղղությանը:

Անկախ կրոնական ուղղություններից, մոլոկաններն ունեն սովորույթներ, որոնք բնորոշ են երեք ուղղություններին էլ: Չեն խմում, չեն ծխում, գողություն ու անառակություն չեն անում, հեռուստացույց չեն դիտում: Նրանք դեմ են իրենց լուսանկարելուն: Մեզ երկար բանակցություններից հետո միայն հաջողվեց լուսանկարել նրանց:



Սովորության համաձայն՝ շաբաթվա յոթերորդ օրը մոլոկանները հանգստանում են: Վայս Արիմիհան շաբաթ օրը ավարտին է հասցնում տնային գործերը և կիրակին դիմավորում այլ տեսքով ու տրամադրությամբ: Մայր ու աղջիկ սպիտակ գոգնոց ու զըլխաշոր են հագնում, տան տղամարդիկ էլ՝ տոնական հագուստ, ու հյուր գնում կամ հյուրերի սպասում: Հյուրերին հրամցնում են տոնական ճաշեր՝ ռուսական բորչի ու լավշա: Խոզի միս մոլոկանները չեն ուտում, որովհետև սրբապաշտություն են համարում: 52-ամյա Արիմիհային ամուսինը Ռուսաստանից է բերել: Եկել է ու սկիզբ դրել գյուղի փոստատան աշխատանքներին: Տասը տարուց ավելի է գլխավորում է գյուղի փոստը, սակայն իր աշխատանքից զոհ չէ: Ասում է, որ հեռախոսագծերը նորոգման կարիք ունեն, հեռախոսը չի աշխատում, նույնիսկ Վանաձոր հնարավոր չէ



գանգել, ուր մնաց Ռուսաստան կամ այլ երկրներ: Հայաստանից ու հայերից Վայս Արիմիհան գոհ է: Կաղամբ, գազար ու այլ բանջարեղեն է աճեցնում ու դրանք վաճառում հայերին:

Խորհրդային տարիներին գյուղատնտեսությամբ զբաղվելուց զատ մոլոկաններն աշխատում էին նաև տեղի կարի ֆաբրիկայում, ճանապարհատրանսպորտային հիմնարկություններում: Հիմա նրանց եկամտի աղբյուրը բանջարաբուծությունն ու անասնապահությունն է: Մեծերի հետ հավասար աշխատում են նաև երեխաները: Օգնում են ծնողներին դաշտում, բանջարանոցում:

Իրենց մշակած բերքը ֆիլիստովցիները Վանաձոր են հասցնում համագյուղացի Սայիսեյի ավտոբուսով: Առավոտյան 9-ին ավտոբուսը լինում է Վանաձո-



րում և գյուղ է վերադառնում ժամը երկուսին: Չորս ժամում մոլոկանները հասցնում են վաճառել կամ փոխանակել իրենց ապրանքը, գնել անհրաժեշտ պարագաներ ու «հարազատ ավտոբուսով» վերադառնալ Ֆիոլետովո:

«Ես բոլորի հետ առանձնահատուկ եմ վերաբերվում, յուրաքանչյուրի խնդիրն իմ խնդիրն է», - ասում է Մայիսեյը: Վարորդությամբ ու գյուղատնտեսությամբ նա կերակրում է կնոջն ու երկու երեխաներին: Ծնողներից նրան է փոխանցվել մաքսիմիստների դավանանքը, որի մասին չցանկացավ մանրամասն խոսել: Միայն նշեց, որ իրենք հետևում են Ավետարանի գաղափարներին ու հավատում կենդանի Աստուծուն:

«Ես մաքսիմիստ եմ ծնվել ու չեմ պատրաստվում փոխել դավանանքս: Իսկ երեխաներս իրենք կորոշեն, թե որ ուղղությունն ընտրել» - ասում է նա:

Եթե ընտանիքի անդամներին կարողանա համոզել, Մայիսեյը վաղն ևեթ Ռուսաստան կգնա՝ չնայած այնտեղ երբեք չի էլ ապրել: Պարզապես երեխաների հետագա ուսման համար է մտահոգվում:

**Հայաստանում մոլոկանները բարձրագույն կրթություն չեն ստանում**

«Դպրոցը լավը չի, ուսուցիչներն էլ մերը չեն, շահագրգռված էլ չեն, որ մեր երեխաները լավ սովորեն: Ես գիտեմ հայերեն, որովհետև շփվում եմ նրանց հետ: Բանակից եկած տղաներն էլ հասկանում ու խոսում են հայերեն, բայց նոր սերունդը չգիտի», - դժգոհում է Մայիսեյը:

Հայերենի չիմացությունը մոլոկաններին բարձրագույն կրթություն ստանալու դժվարությունների առջև է կանգնեցնում, և այն անհասանելի է նրանց համար:

13-ամյա Կոլյա Ռուզանեստկինը հայերեն չգիտի: Ասում է, որ հայոց լեզուն իրեն հուր է գալիս, դպրոցում անցնում են, բայց ոչ խորացված: Ուզում է լավ մասնագետ դառնալ: Սակայն չի պատկերացնում, թե որտեղ կարող է ուսումը շարունակել դպրոցն ավարտելուց հետո: Որոշել է ընտրել հոր ուղին ու դառնալ մեխանիկատոր: Դպրոցից ու ուսուցիչներից Կոլյան գոհ չէ:

Ֆիոլետովոյի միակ դպրոցում սովորում է 228 աշակերտ: Ուսուցիչների մեծ մասը հայեր են: Միայն մեկն է, որ ազգությամբ ռուս է ու Ռուսաստանում է մասնագիտություն ձեռք բերել:

Գյուղապետի տեղակալ Արարատ Վիրաբյանի հավաստմամբ, եթե խորհրդային տարիներին մոլոկաններն ուսումը շարունակում էին հիմնականում Ռուսաստանում և որոշ դեպքերում նաև Հայաստանում, ապա անկախության տարիներին դեռ ոչ ոք Հայաստանում կրթություն չի ստացել:

Դպրոցն ավարտելուց հետո երիտասարդները լծվում են տնային հոգսերին: Պատանիներ զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով, աղջիկներն էլ՝ շուկա գնում, տնային գործեր անում ու սպասում իրենց ամուսնությանը:

**Մոլոկանների ավանդույթները**

Հարսանիքն անցնում է ավանդության համաձայն՝ առանց խմիչքի, թեյով ու տարբեր ուտեստներով: Հարսնաքույրն ու հարսնեղբայրը մոլոկանների մոտ անպայման ամուսնացած պետք է լինեն: Հարսնացուն սպիտակ զգեստ է հագնում և «չուպիկ» կոչվող հուլունքներով գլխարկ կրում: Ի պատասխան համաձայնության՝ հարսնացուն փեսային սպիտակ թաշկինակ է նվիրում, ծնողներն էլ՝ քաղցրեղենով լի պայուսակ: Ոսկյա զար-

դեր մոլոկանները միմյանց չեն նվիրում: Փոխարենը աղջկա ծնողները հարուստ օժիտ են պատրաստում: Հարսնացուի կուսությունը հաստատող որևէ հանգամանք ու պարագա մոլոկանները չեն ընդունում: Ամուսնական հարաբերություններն առանց դրա էլ օրհնում է այն ուղղության առաջնորդը, որին պատկանում են փեսան ու նրա ընտանիքը: Մեկ անգամ ամուսնանալով՝ մոլոկանները հետդարձի ճանապարհ չունեն: Ամուսնությունը ողջ կյանքի համար է, հակառակ դեպքում քեզ կարհամարհի ու չի ընդունի քո իսկ սեփական համայնքը: Հարսանիքին առանց հրավերի ոչ ոք չի կարող ներկա լինել: Երբ մենք ցանկացանք ներկա գտնվել և լուսանկարել նշանադրության արարողությունը, հարսնացուն մերժեց: Հարագատները պատճառաբանեցին, որ ամուսնացողները տարբեր ուղղությունների են պատկանում և վախենում են ավելորդ խոսակցություններից՝ անկախ նրանից, որ ուղղությունների միջև ամուսնությունն արգելված չէ: Այլ հարց է օտարների հետ ամուսնանալը: Հայերի հետ այդպես չեն խառնում: Չնայած Ֆիոլետովոյի պատմության մեջ եղել են այդպիսի ամուսնություններ ևս:

Ժենյա Տելեգինան ծնունդով Ջերմուկից է: Ամուսնուն առաջին անգամ հանդիպել է աշխատանքի վայրում՝ հիվանդանոցում: Ազգությամբ հայ կնոջը մոլոկան ամուսինը կնության է առել՝ պայմանով, որ ընդունի նրա դավանանքը: 52-ամյա կինը պատկանում է «պրիզուն» ուղղությանը: Ամուսինը մահացել է տարածման տարի առաջ՝ թողնելով կնոջն առանց երեխաների: Մոլոկանները նրան համարում են «սուպեր հայ» և հաճախ ասում, որ «եկել իրենց գյուղում ապրում է ու իրենց կարգի է բերում»: Ժենյայի ապրուստի միջոցը սեփական խանութն է ու կաղամբի թթուն, որի պատրաստման գաղտնիքը սովորել է մոլոկաններից ու հիմնականում վաճառում է Երևանում: Գյուղում ժենյան փոքրամասնության մեջ փոքրամասնություն է համարվում ու հաճախ է ըմբոստանում նրանց սովորույթների դեմ:

«Իրենց մոտ ամեն ինչ թաքուն է: Քարոզում են, չէ՞, որ խմել, ծխել, անառակություն անել, բամբասել չի կարելի: Բայց այնպիսի բաներ են անում, որ հարց ես տալիս, թե էլ ինչու՞ ես հավատք գնում, եթե պետք է մեղք գործես: Դավանում եմ, որ ներել է պետք, բայց իրենք չեն ներում: Իրենց երիտասարդ աղջիկներն ամբողջ գիշեր կարող են թափառել փողոցներում, հետո նամուսով ամուսնանալ: Մարդուն կարող են ողջ կյանքում արհամարհել ու համայնքից դուրս գցել՝ միաժամանակ քարոզելով, թե Աստված ներում է բոլորին», - պատմում է տիկին ժենյան, որը դավանելով «պրիզունների» գաղափարախոսությանը՝ ամեն ինչ ձևական է համարում ու հավաքների չի մասնակցում:

Միայն սեպտեմբերին այս ուղղությունը երեք տոն ունի: Առաջինը մահացածների հիշատակման օրն է: Թաղման արարողությունից հետո երկրորդ անգամ այդ օրն են այցելում գերեզմանատներ: Մյուսը մեղքերի թողության, վերջինն էլ՝ Աստծո խոսքը լսելու օրն է:

«Իրենց մշակույթն իրենք պահում են», - հարևանների մասին իր պատմությունն է ավարտում ժենյա Տելեգինան:

Ֆիոլետովոյում ներկայումս 585 տնտեսություն կա: Նրանց բնորոշում են որպես աշխատասեր ժողովուրդ, որոնք ժամանակին են վճարում հարկերն ու պարտք մնալ չեն սիրում:

«Մեր նախնիների խոսքը մեզ համար օրենք է: Ասել են, որ այստեղ ենք ապրելու, ուրեմն պետք է այս հողի վրա էլ շարունակենք ապրել: Սա մեր հողն է», - ասում է գյուղի ամենատարեց մոլոկանը:

**Նաիրա ԲՈՒԼՂԱԴՐՅԱՆ**  
*Լուսանկարները՝ Օնիկ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ*

- Մայիսի 19-ին ԳՅ նախագահ Ռոբերտ Քոչարյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլայ Պավլովը: Ռ. Քոչարյանը նշել է, որ հայ-ռուսական հարաբերություններն անընդհատ զարգանում են և ակնկալում է, որ նոր դեսպանը նույնպես նշանակալի ներդրում կունենա այդ գործում: Դեսպանն, իր հերթին, հավաստիացրել է, որ իր փորձն ու գիտելիքները կներդնի հայ-ռուսական ավանդական համագործակցությունը շարունակելու համար:
- Տեղի է ունեցել Հայաստանի գրողների միության 14-րդ

համագումարը: Միության նախագահ է վերընտրվել Լևոն Անանյանը:

- Հայաստանում 800 օրինակ խմբաքանակով լույս է տեսել եզդիների առաջին այբբենարանը: Այն դպրոցականների նստարաններին կհայտնվի ընթացիկ տարվա սեպտեմբերին: Ինչպես ԱրմինեՖոյի թղթակցին հայտնել է դասագրքի համահեղինակ Հասան Թամոյանը, եզդիներն անցյալում ունեցել են իրենց գրերը, այբուբենը բաղկացած է եղել 33 տառից, սակայն դարերի ընթացքում գրերը մոռացվել են: Այբբենարանի տառերը նման են կիրիլիցային: Ըստ Գ. Թամոյանի, հետագայում լույս կտեսնեն նաև եզդիերեն դասագրքեր բարձր դասարանցիների համար:



# ՄԵԾԱՀԱՐՈՒՄՆ «ՔԱՋՆԱԶԱՐՆԵՐԸ»

«Ֆորբս» ամսագիրը հերթական հատուկ թողարկմամբ ընթերցողներին է ներկայացրել Ռուսաստանի 100 ամենահարուստ բիզնեսմենների ցուցակը: Համանման առաջին թողարկման ժամանակ հանդեսը հեռատեստերեն նկատել էր. «Կապիտալիզմն ամենադինամիկն է մարդկության հնարած բոլոր հասարակական-տնտեսական համակարգերից: Ինը գրոները համար մրցակազմում ձեռնարկությունները հաղթում են կամ կնքում մահկանացուն ապշեցուցիչ արագությամբ», 31 հոգի դուրս են մնացել անցյալ տարվա ցուցակից:

Այս անգամ էլ հաստատվածների մեջ չկա... ոչ մի հայ: Մինչդեռ կան վրացական ու ադրբեջանական ազգանուններ: Այս «օլիգախադայուն» էլ մենք չենք պիտի չհայտնենք: Անկախաճալուց հետո ինչ-որ անհասկանալի բաներ են տեղի ունենում հայերիս հետ, այդ թվում՝ նաև սփյուռքում: Կորցնում ենք անհատականություններ ծնելու մեր փառավոր ավանդույթները:

Եվ այսպես, Ռուսաստանի մեծահարուստների «հայագուրկ» ցուցակն «ավանդաբար» գլխավորում են հրեաները: Ճիշտ է, այս անգամ առաջատարի դերը շնորհագուրկ խողորկովակու փոխարեն ստանձնել է «Չուկոտկայի պետ, լոնդոնցի դեմոկրատ» Ռոման Աբրամովիչը՝ 14.700 մլն (զուևարները բերված են դոլարներով): Ակամա հիշում ես ռուսական թերթերից մեկի խաթիչ արտահայտությունը՝ նահանգապետ լինելուց լավ բիզնես չկա...

100-ից 30-ը միլիարդատերեր են: «Ամենաաղքատն» ունի 280 միլիոն: Ամենաջահելը 33 տարեկան է, ամենաաղքատը՝ 73: Ցուցակում կա իգական սեռի միայն մեկ ներկայացուցիչ, բայց ինչպիսի՞նք. Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի կինը՝ Էլենա Բատուրինան (1.400 մլն): Ինչպես տեսնում եք, քաղաքագլխի կին լինելն էլ վատ բիզնես չէ: Եթե բոլոր մեծահարուստների ունեցածը հանրագումարենք, կանցնի 141 միլիարդից:

Հնարավոր է, որ ռուսաստանցի շատ պաշտոնավարներ հանգիստ մրցեն միլիոնատերերի հետ, սակայն «Ֆորբսը» սկզբունքորեն առայժմ չի «հաշվում» նրանց փողերը, որովհետև դրանք անթափանց են: Այդուհանդերձ, ցուցակի մեջ մտնում են 7 սեմատոր, Պետրոսյանի 5 պատգամավոր և 2 պրեզիդենտ: Շատ քիչ բան է փոխվում այն իմաստով, որ մեծահարուստների

գերակշիռ մասը հարստությունը կուտակում է Ռուսաստանի ազգային հարստության բնական պաշարների շահագործման միջոցով՝ նավթ, գազ, ածուխ, անտառ, մետաղ և այլն: Շատ քիչ են նրանք, ովքեր փորձում են զարգացնել արդյունաբերության ճյուղերը, արմատավորել նորագույն տեխնոլոգիաներ: Այլ խոսքով, Ռուսաստանը դեռևս չունի իր Ուիլյամ Գեյթսը:

Համարում հետաքրքրական շատ տվյալներ կան մեծահարուստների ունեցվածքի, ամենական կյանքի, նախասիրությունների մասին և այլն: Սակայն, կարծում են, նվազ ուշագրավ չեն այդ անձանց վերաբերյալ անցկացված հասարակական հարցումների արդյունքները: Ռուսաստանցիների մեծ մասը գտնում է, որ երկրի տնտեսական կյանքի վրա ունեցած ազդեցության լծակները ներկայիս գործարար ընտրախավին բաժին են ընկել ոչ թե սեփական ջանքերի, այլ այն բանի շնորհիվ, որ նրա ներկայացուցիչներն «անհրաժեշտ պահին հայտնվել են անհրաժեշտ տեղում»: Այսինքն բնակչության աչքում նրանք ոչ թե ձեռներեցներ են, որոնք հաջողության են հասել իրենց աշխատանքի ու տաղանդի շնորհիվ, այլ «քաջնազարներ», որոնք կարողացել են իրենց բաժինը գուցե նախ և առաջ պետական սեփականությունը կոպեկներով ձեռք գցելու, բնական պաշարներն անօրինակամորեն ու անարդարացիորեն իրենց մատչելի դարձնելու միջոցով:

Շատ ռուսաստանցիների համար այդ մարդիկ ապրում են «Լուսնի վրա». նրանց ապրելակերպն այնքան է հեռու ու կտրրված առօրյա կյանքից, որ հաստատվածները սովորական մարդու համար վերածվում են անցանկալի երևակայական էակների: Հակակրանքը հասնում է այն աստիճանի, որ մարդիկ չեն հավատում նաև միլիոնատերերի բարեգործական նախաձեռնություններին՝ Ռուսաստան վերադարձնել Ֆաբերժեի ձվերը, ջաչկացել Մեծ թատրոնին և այլն: Նման գործողություններն ընկալվում են որպես աչքակապության փորձեր՝ նվաճել իշխանության բարեհաճությունը, խուսափել պատասխանատվությունից, պահպանել ապօրինաբար յուրացվածը:

Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ԳԱԼԻՍ ՈՒ ԳՆՈՒՄԵՆ, ԵՆԳԻԲԱՐՈՎՆԵՐԸ ՄՆՈՒՄ ՀԱՎԵՐԺ

Երևանի պետական կրկեսի համար այս տարին «աշունը սըրտում ծաղրատուին» Լեոնիդ Ենգիբարովին է նվիրված: Օրերս մեծ ծաղրածուի 70-ամյակին նվիրված միջոցառմանը պետական կրկեսում նվագում էր փողային նվագախումբը, իսկ ամբողջ դահլիճը երգում էր Լ. Ենգիբարովի սիրելի Կոնստանտին Օրբելյանի «Հավատում եմ ես և չեմ հավատում» երգը: Ընդհանրապես այդ օրը շատ երգեր հնչեցին Արամի և Էմմա Պետրոսյանների, Զարուհի Բաբայանի, ծաղրածուի անունը կրող կրկեսային ստուդիայի սաների կատարմամբ:

«Ծաղրածուն մասնագիտություն չէ, այլ աշխարհայացք», - այդ բառերն են գրված երեկոյի հրավիրատոմսի վրա: Դա վերաբերում է նաև հենց Լ. Ենգիբարովին, ում առաջին հայացքից երգիծական ստեղծագործությանը հատուկ է նուրբ լիրիզմը: Այդ ամեն

նի և շատ այդ բաների մասին հիշեցին հորեյանական միջոցառման մասնակիցները:

Երգիչների, դերասանների ելույթներն ընդմիջվում էին Լ. Ենգիբարովին ներկայացնող կինոկադրերով, նրա գործընկերների, նրան ճանաչողների հուշերով: Հատուկ երեկոյին մասնակցելու համար Հայաստան էր ժամանել ժողովրդական արտիստ, հայտնի վարժեցնող Ստեփան Իսահակյանը, իսկ պետական այրերից ներկա էր միայն Աժ ԳՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը, ում, ամենայն հավանականությամբ, ծանծաղցել էին խորհրդարանի «կրկեսային ներկայացումները», և նա որոշել էր իսկական կրկես այցելել: Ավելորդ չէ հիշեցնել, որ նախարարները, պաշտոնյաները գալիս ու գնում են, Ենգիբարովները՝ մնում հավերժ:

Լ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

### ՂԻՄԸ ՃԱՆԱԶԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն ռադան ապրիլի 24-ը հայտարարել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Այդ որոշումն ընդունվել է պատգամավոր Սերգեյ Շուվայնիկովի առաջարկով, վերջինս Ղրիմի ռուսների կոնգրեսի ղեկավարն է: Ըստ որում՝ Ղրիմի խորհրդարանի նիստին ներկա 62 պատգամավորից 59-ը կողմ է քվեարկել այդ որոշմանը: «Մենք պետք է ունենանք այդպիսի հիշատակի օրեր: Կարծում են, հայ համայնքը գոհ և շնորհակալ կլինի դրանից», ասել է Շուվայնիկովը: Ռադայի որոշման վերաբերյալ Ուկրաինայի արտգործնախարարությունը դեռ չի արտահայտել իր դիրքորոշումը, և, ըստ ամենայնի, առայժմ կխուսափի որևէ հայտարարություն անելուց, նկատի ունենալով դրա բացասական անդրադարձը ուկրաինա-թուրքական հարաբերությունների վրա:

### ՆՈՐ ԱՎՏՈՔՈՒՄՆԵՐ

Ուկրաինայի Չերկասի քաղաքից ներկրված «Բոզդան» մակնիշի 50 նոր ավտոբուսներն այսուհետ կսպասարկեն մայրաքաղաքի վեց երթուղիներ: Դրանք կաշխատեն 2-րդ, 15-րդ, 16-րդ, 21-րդ, 33-րդ, 42-րդ երթուղիներով: Երկրորդ համարի ավտոբուսը կերթնելի Ռադիկայմից մինչև երկաթգծի կայարան, 15-ը՝ Աերացիայից մինչև Աբովյանի պուրակ, 16-ը՝ Նուբարաշենից Աբովյան պուրակ, 21-ը՝ Սարի թաղ, 33-ը՝ Դավիթաշենից մինչև երկաթգծի կայարան և 42-ը՝ Մարաշից մինչև Երևանի կենտրոնական ավտոկայան:

Եթե բոլոր հարուստներն իրենց բոլոր փողերն իրար մեջ բաժանեն, բոլորին չի հերիքի:  
ՃՅՈՒԼ ԲԵՐՏԱՅՈՆ

# ԽՆԴԻՐԸ ՉԼՈՒԾԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Սուրբ Ղազար կղզու թանգարանի ուղեկցորդները հայարտության և երախտագիրությունը այցելուններին հիշեցնում են, որ նույնիսկ Նապոլեոնը հատուկ հրամանագրով արգելել է դիպչել Մխիթարյանների հայկական կղզու գլուխգործոցների հավաքածուին: Բայց բոլոր գորավարները չէ, որ Նապոլեոն են, և երկրորդ մեծ գորավարի այդ հրամանագիրը, չգիտես ինչու, չխանգարեց նրանց, ովքեր սկսեցին կողոպտել Տրիեստի վանքում գտնվող Մխիթարյան միաբանության գանձերը: Մինչդեռ Տրիեստը Վենետիկից ընդամենը 60 մղոն է հեռու: Էլ չեն խոսում տարերային աղետների և հանցագործությունների մասին: Կյանքում ամեն ինչ կարող է պատահել:

Եվ այդ դեպքում, ասենք, Վիեննայի Մխիթարյանների վանքում, որ ես հատկապես մտա Սուրբ Ղազար կղզի մեկնելուց առաջ, մենք կգրկվենք ոչ միայն Ռենբրանդտից և Այվազովսկուց, ոչ միայն 4000-ամյա կնոջ և նրա կատվի մուսիայից, թերթերի, ոսկերչական իրերի եզակի հավաքածուներից, այլև 120 հազար հազվագյուտ գրքերից և օտար լեզուներով Հայաստանի պատմությանը նվիրված 10 հազար արժեքավոր մենագրություններից: Իսկ եթե փորձանք պատահի Սուրբ Ղազար կղզու վանքի թանգարանում, ապա մենք կգրկվենք ոչ միայն Այվազովսկու 2 տասնյակ գործերից, հազարավոր անգին կտավներից, ոչ միայն Պետրոս Առաջինի անձնական կնիքից, երայերեն, վրացերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն հին ձեռագրերից, ոչ միայն Կիլիկիո վերջին թագավոր Լևոն Զ-ի ոսկեպատ թրից, այլև հայկական ձեռագրերի պահոցներում ամենահինը համարվող Սյրե թագուհու 6-7-րդ դդ. Ավետարանից:

Ամբողջ մղձավանջն այն է, որ, ինչպես սրտի կսկիծով ասում է Մխիթարյանների համաշխարհային միաբանության առաջնորդ, արքայազն Եղիա Կիլիկյանը, նույնիսկ բազմաթիվ գլուխգործոցներ չունեն լիարժեք պատճեններ, իսկ գեղանկարչական եզակի աշխատանքների մեծ մասը չի մտցվել պլեյմների մեջ: Ի վերջո խոսքը ոչ թե այս կամ այն պետությունից հնության հուշարձանները դուրս բերելու, այլ հուսալի պայմաններ ստեղծելու մասին է, որպեսզի գանձերը հավիտյան պահպանվեն: Այս կապակցությամբ պետք է ասել, որ առկա է ևս մեկ խնդիր, որը թերևս առավել մտահոգիչ է: Տարեցտարի նուրանում են Մխիթարյանների և մանավանդ թանգարանային, վերականգնողական գործի մասնագետների շարքերը: Չկան Ալիշանի գործի նույնիսկ նվազագույն թվով նվիրյալներ: Դեռ վերջերս հիրավի լուսավորչական վանքերի իսկական հպարտությունն էին ժամանակակից տպարանները, որտեղ տպագրվում էին

գրեթե ամբողջ հայության համար նախատեսված գրքեր, այդ թվում դասագրքեր, աշխարհագրական քարտեզներ և ատլասներ: Տպարանները ձգողական ուժ ունեին բազմաթիվ հետազոտողների համար: Այսօր ժամանակակից տեխնիկան (համակարգիչները, սքաներները, տպիչները) թույլ է տալիս գրեթե տնային պայմաններում գրքեր հրատարակել: Այնպես որ, կան նաև օբյեկտիվ պատճառներ: Բայց դրանից գործը չի հեշտանում: Քանզի մնում է գլխավոր ազգային և համամարդկային արժեք ներկայացնող մեր գանձերի ճակատագրի հարցը:

Այս պատճառով «Կիլիկիա» նավի ամբողջ անձնակազմը որոշեց առաջ քաշել այդ բախտորոշ հարցը՝ հասկանալով, որ մենք որևէ հայտնագործություն չենք անում, քանզի թանգարանների և դրանց ցուցանմուշների մասին հայտնի է ամենքին: Բայց մենք չենք կարող չօգտվել «յոթ ծովերով նավարկելու» մեր հնարավորությունից, երբ մեր նավի երթուղին թույլ է տալիս այցելել վայրեր, որտեղ գտնվում են հայ ժողովրդի անգին սեփականությունը հանդիսացող վանքեր ու թանգարաններ: Մենք ընդամենը հարց ենք բարձրացնում: Ահա թե ինչու «Կիլիկիայի» մեկնարկի նախօրեին ամբողջ անձնակազմով հերթական անգամ էքսկուրսիա կատարեցինք հրապարակախոսական այս խնդիրը լուծելու նպատակով: Միաբանության առաջնորդ, արքայազն Եղիայի և ուղեկցորդ Կարոյան Կարպետյանի հետ շրջեցինք թանգարանի բոլոր սրահներում, և մեր օպերատոր Սամվել Բաբայանը նկարահանեց գանձերի մեծ մասը, որոնցից մենք պարզապես իրավունք չունենք գրկվելու:

Ես շտապեցի գիտարշավի սկզբում արժարժեք մեր ժողովրդի համար ցավոտ այս թեման նաև այն պատճառով, որ մեր առաջին նավահանգիստը լինելու էր հենց Տրիեստը: Այնպես որ, սովալ բարդ խնդրով այնտեղ էլ ենք զբաղվելու: Ի թիվս այլ բաների, ժապավենի վրա կարճամազները պահպանված հայկական եկեղեցին, դպրոցը և մյուս վանքերը, որտեղ 200 տարի առաջ մենք մեկընդմիշտ կորցրինք մեր ժողովրդի անգին գանձերը:

Մտադիր ենք այսուհետև էլ զարգացնել այս թեման, մեր տեսածի մասին պատմել ընթերցողներին՝ հույս ունենալով, որ մեր երկրի դեկավարությունը և համապատասխան կազմակերպությունները մեծ ուշադրություն կդարձնեն սովալ խնդրին, որը չլուծելը պարզապես վտանգավոր է:

**Զորի ԲԱԼԱՅԱՆ, «Կիլիկիա», Ադրիատիկ ծով**

## Ի՞նչ փվեց սոցիալական քարտերի դեմ պայքարը Դժգոհ են շատերը, բայց քչերն են դիմում դատարան

Դեռևս 2004թ. ամռանը Վանաձորում, Հայկական Սահմանադրական Իրավապաշտպան Կենտրոնի (ՀՍԻԿ) և Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի ջանքերով տեղի ունեցան երկու հանրահավաքներ՝ «Ընդդեմ մարդկանց համարակալման» խորագրով: Այն թատերականացված հանդեսի բնույթ էր կրում՝ «սոցիալական քարտերի թաղում» սցենարով, որի ընթացքում մոտ 200 մարդ իրենց պարտադրված քարտերը ետ հանձնեցին հանրահավաքի կազմկոմիտեին՝ սոցիալական ծառայությանը փոխանցելու նպատակով: Այդ և մայրաքաղաքում կայացած հաջորդ հանրահավաքներից հետո քարտերի ներդրման ժամկետը երկարաձգվեց մինչև հունվար, որից հետո քարտերի դեմ սկսված պայքարն աստիճանաբար թուլացավ, ինչը հնարավորություն տվեց քարտերի ներդրումն անցկացնել «կամավոր-պարտադիր» սկզբունքով, մինչդեռ այդ առթիվ դժգոհությունները մշտապես առկա են եղել թե մամուլում և թե հեռուստատեսությունում: Դրա արդյունքում պաշտոնական մամուլն ավետեց, որ Վանաձորում սոցիալական քարտերի հայտագրման պլանը կատարվել է 95%-ով, և տպավորություն ստացվեց, թե Վանաձորում մարդիկ պարզապես ուրախությունից գլուխները կորցրել են՝ օր առաջ այդ քարտերն ունենալու անհամբերությունից այրվելով:

«Ինչու» սոցիալական քարտերի կապակցությամբ հանրահավաքները դադարեցին Վանաձորում», հարցի առնչությամբ, որ մարտի 19-ին, Վանաձորում, ՀՍԻԿ-ի կողմից կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ ուղղեցինք կենտրոնի նախագահ Գևորգ Մանուկյանին, վերջինս պատասխանեց, որ «երևում է շարունակվում են», իսկ քարտերի ներդրման համար մեղքը գցեց PADCՕ ծրագրի վրա, որի կազմակերպիչները «Ուկրաինայում չեն կարողացել անց կացնել, իսկ Հայաստանում անց են կացրել և նույնիսկ պարծեցան»:

Ինչպես հայտնի է, քարտերի դեմ հանրահավաքների ժամանակ ըմբոստ ելույթներ էր ունենում Հայ Արիների միության նախագահ Արմեն Ավետիսյանը: Երբ Գ. Մանուկյանին հիշեցրինք, որ Ավետիսյանը Վանաձորում ՀՍԻԿ-ի հետ միասին հանրահավաք էր կազմակերպում, և հետաքրքրվեցինք, թե արդյո՞ք Ավետիսյանի ձեռքավորման առնչությամբ խափանման միջոց կալանքը փոխելու միջնորդությամբ դիմում-ստորագրահավաքին ՀՍԻԿ-ը չի մասնակցել, Գ. Մանուկյանը պատասխանեց. «Չենք ստորագրել, բայց ես իրենց գրասենյակ դրանից հետո այցելել են, և հետո մեզ ոչ ոք չի դիմել ստորագրության հարցով»: Փաստորեն Ավետիսյանի հետ անմիջական առնչություն չունեցող մարդիկ ստորագրել էին՝ ի պաշտպանություն նրա, բայց վերջինիս հանրահավաքային գործընկերը չէր ստորագրել: Պակաս զարմանալի չէր նաև այն, որ Գ. Մանուկյանը տեղյակ չէր, որ մեկ օր առաջ, մարտի 18-ին Ավետիսյանը արդեն ազատ էր արձակվել՝ դատարանի որոշմամբ: Իսկ առավել զարմանալին այն էր, որ եթե չհետաքրքրվեինք, Գ. Մանուկյանը մամուլի ասուլիսում չէր էլ տեղեկացել, թե ի՞նչ ընթացքի մեջ է Լոռու մարզպետի մի որոշման դեմ իրենց բողոքարկած դատական հայցը: Դատարանը սխալ է համարել մարզպետի այն որոշումը, որով համայնքապետերին պարտադրվում էր իրենց ենթակայաների անձնական գործում ներառել նրանց, և ընտանիքի անդամների սոցիալական քարտի համարները: (Իսկ արդյո՞ք համայնքապետերը սխալ կհամարեն իրենց վերադասի որոշումը):

«Կենտրոն դիմել են 13 քաղաքացի, որոնք չեն կարողացել իրավական գործարք կատարել: Վեց դիմում գտնվում է դատարանում, ևս յոթը նույնպես կներկայացվեն», - նաև հայտնեց Գ. Մանուկյանը:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

«Հայոց ծածկանունների բառարանը»՝ 50 տարիների արգասիք

Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ տարիներ շարունակ ԵՊՀ հրատարակչությամբ լույս են տեսել շուրջ 50 արժեքավոր հայագիտական աշխատություններ: Մեր նորագույն պատմության ծանր տարիներին՝ 90-ականներին, երբ քվում էր ոչ միայն գիրք գրելու, նաև տպագրության ժամանակները չեն, Գյուլբենկյան հիմնարկամբ նպատակային գրա-հրատարակչական գործունեություն էր ծավալում դասագրքերի, քրիստոնափաների, գիտական լուրջ աշխատությունների: Այս տարիներին համալսարանը հիմնադրամի աջակցությամբ համալրվեց համակարգչային ժամանակակից սարքավորումներով: Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանը՝ Երևանի պետական համալսարանի նախկին սանը, հիմնադրամի հովանավորությամբ լույս տեսած իր տեսակի մեջ եզակի և կոթողային «Հայոց ծածկանունների բառարան» գրքի երեկվա շնորհանդեսին արձանագրեց, որ ինքը համեստ զինվորի իր պարտականությունն է կատարում, որը հերոսություն չէ, պարզապես ինքը վերադարձնում է համալսարանին այն, ինչ ստացել է:

Հեղինակը՝ բանասեր, թատերագետ Բախտիար Հովակիմյանը, դեռևս ուսանողական տարիներից զբաղվում է ծածկանունների գաղտնագրմամբ: 1958 թ. գրականության և արվեստի թանգարանում աշխատելու տարիներից ձեռնարկել է այս աշխատությունը, գրեթե դավանանքային նվիրվածությամբ հանդես էր գործել և բանասիրական հետաքրքրությունները:

Այս գործը հիրավի բարձր գնահատանքի է արժանի նախ և առաջ բժախնդիր աշխատատարության առումով: Հայ մշակութային իրականության մեջ աննախադեպ այս բառարանում վերծանված է 8000 հեղինակի 25 հազար ծածկանուն, որպես աղբյուրներ հանդիսացել են 17 լեզուներով հազարավոր պարբերականներ և գրականություն: Բառարանի երկրորդ բաժնում տրված են 8000 հեղինակների կենսագրությունները:

Համալսարանի ռեկտոր Ռադիկ Սարտիրոսյանը բարձր գնահատեց հեղինակի կենդանի տրամաբան աշխատանքը, ապա անդրադարձավ «Գյուլբենկյան» հիմնադրամի և նրա հայկական բաժանմունքի տնօրեն Զավեն Եկավյանի ազգամեր գործունեությանը, ինչպես գրաիրատարակչական, նաև նորագույն տեխնիկայով համալսարանը համալրելու և ծանր տարիներին պրոֆեսորադասախոսական կազմին նյութապես աջակցելու համար: Զավեն Եկավյանին, որին տարիներ առաջ պատվավոր դոկտորի աստիճան էր շնորհվել, Ռ. Սարտիրոսյանը երեկ հանձ-

նեց համալսարանի բարձրագույն պարզև՝ «Ոսկե մեդալը»: Համալսարանի հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանը շնորհավորանքից ու գնահատանքից հետո անդրադարձավ հիմնադրամի աջակցությամբ տպագրված գրականությանը, մասնավորապես ՀՀ նախագահի մրցանակին արժանացած 5 հատորանոց «Տեղանունների բառարանին» և վերջերս «Վ. Թեքեյան» մրցանակ ստացած պրոֆ. Երջանիկ Գևորգյանի շարժումների լեզվի եզակի բառարանին:

Լևոն Անանյանը, Վլադիմիր Բարխուդարյանը, գրականագետ Սամվել Մուրադյանը արժևորեցին գիրքն իբրև դարակազմիկ, ֆունդամենտալ աշխատանք՝ բարձր գնահատելով Գյուլբենկյան հիմնարկության նպաստը հայ մշակույթի և գիտության զարգացման գործում, հատկապես ուժացման վտանգի առաջ կանգնած սիդուռքահայ իրականության մեջ դպրոցական ուղորտում:

Մի կարևոր նկատառում արեց փիլիսոփայության ֆակուլտետի դեկան պրոֆ. Հ. Միրզոյանը, այսօր Հայաստանում կատարվող շատ ներդրումների մեջ առանձնացնելով Գյուլբենկյան հիմնարկության օգնությունը բովանդակության և ձևի առումով: «Դա նպատակ է, ոչ թե միջոց և արվում է ասպետաբար, երբեմն առանց հեղինակներին ճանաչելու»:

Բախտիար Հովակիմյանը գիտության մշակիմ վայել պատշաճությամբ և համեստորեն երախտիքի բազում խոսքեր հղեց՝ պատիվ համարելով իր գրքի շնորհանդեսն այս պատվավոր դահլիճում անցկացնելը՝ հիմնադրամի տնօրենի ներկայությամբ:

10 տարիների բացակայությունից հետո Զավեն Եկավյանը բավարար նկատեց ուսհաստատությունը պահելու և զարգացնելու դեկավարության ջանքերը, հատկապես հայագիտական ասպարեզում: «Հայագիտությունը մեր հացն է, լեզուն՝ մեր հողը, հայագիտությունը մեր արժանապատվությունն է, նաև քաղաքական ուժ է, որ պահանջում է ավելի նպատակային, հավաքական աշխատանք»: Նա Հովակիմյանի բառարանը կարևոր իրադարձություն համարեց նկատելով, որ ֆրանսիական, անգլիական մատենագրության մեջ ինքը նման երևույթի չի հանդիպել և հույս հայտնեց, որ տպագրական գործը կգարգացվի, ավելի շատ մշակույթ կարտահանվի, նրանց համար նաև, ովքեր տեղադրված են մեր պատմությունում ու մշակույթում:

Ավարտին նա Գյուլբենկյան հիմնարկության 50-ամյակի հուշամեդալներ հանձնեց Ռ. Սարտիրոսյանին և Բ. Հովակիմյանին:

Սեւանյա ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՈՎԱԾԸ ԴԱՐՁԵԼ Է ՇԱ՛Տ «ԷՍՏՈՆԱԿԱՆ»

Էստոնիայի գյուղատնտեսության առևտրի պալատում մայիսի 25-ին կազմակերպված համոտեսի ժամանակ փորձագետների խումբը ընտրել է 31 լավագույն ապրանքատեսակները, որոնց մեջ է նաև հայկական խորովածը: «Լավագույն մսամթերք» անվանակարգում հայկական ազգային խորտիկը ստացել է «Էստոնական ճանաչված ապրանքատեսակ» մրցանակը:

Էստոնական շուկայում հայկական խորովածը հայտնվել է 2000 թվականի մայիսին: Նախաձեռնողը Պիլվասկի մսամթերքի կոմբինատն էր, որ 1998 թվականին հիմնել էր «Տոդաս» բաժնետիրական ընկերությունը: Դժվար չէ կռահել, որ այդ ընկերության համատերը հայ է՝ Սպարտակ Հակոբջանյանը:

Մինչ խորովածին անցնելը կոմբինատը արտադրում էր ամառային տարբեր գրիլներ, սակայն 2000 թվականի մայիսին՝ ամառային շրջանի բացումից առաջ, ընկերության շուկայագետները խորհուրդ տվեցին ապրանքատեսակների մեջ մտցնել նորը՝ հայկական խորովածը:

Էստոնիայում հայկական խորովածը հայտնի դարձրեց խորովածի մեծ վարպետ, հայաստանցի Արա Կարապետյանը: Նա տիրապետում է խորոված պատրաստելու բոլոր նրբերանգներին, որի շնորհիվ վերջին 3 տարիներին խորովածի պահանջարկը 3 անգամ աճել է: Հայկական խորտիկը նվաճել է էստոնացիների սիրտը, որի ապացույցը հենց «Էստոնական լավագույն ապրանք-

ատեսակ» մրցանակն էր: Հայկական խորովածը հայտնի է դարձել ոչ միայն որպես առևտրային հաջող ապրանք, այլև էստոնացիներին ճանաչելի դարձրել Հայաստանի ազգային նկարագիրը, ի դեմս Էստոնիայի փոքրաթիվ հայ համայնքի: Հայերը կարծում են, որ սեփական երկիրն ու մշակույթը կարելի է ներկայացնել ոչ միայն բազմադարյան պատմությամբ, այլև ազգային հրաշալի խոհանոցով:

**2 ԱՄՍՈՎ ԷՆ ԶԳՉԳԵՅԻՆ**

Հայաստանի քաղաքացիների ստեղծված խնայողական ավանդների խնդիրն ուսումնասիրող աշխատանքային խմբի եզրակացության ներկայացման ժամկետը հունիսի 1-ից երկարաձգվել է մինչև օգոստոսի 1-ը: Այս մասին հունիսի 3-ի ճեպագրություն հայտնել է խմբի ղեկավար, Արժեքների հանձնաժողովի նախագահ Էդվարդ Մուրադյանը: Ըստ նրա, լրացուցիչ ժամանակը կօգտագործվի տվյալ խնդրի լուծման գործում միջազգային և մասնավորապես՝ ԱՊՀ երկրների փորձի առավել խորն ուսումնասիրման, ինչպես նաև՝ նախկին ԽՍՀՄ խնայեալու հանրապետության քաղաքացիների ավանդների մասին տվյալների նորացման համար: Հիշեցնենք, որ խումբը ստեղծվել էր Ռոբերտ Քոչարյանի կետավարին ստորագրած կարգադրությամբ: Աշխատանքային խմբում ընդգրկված են 13 հոգի, որոնք հիմնականում տարբեր նախարարությունների և Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ են:

# ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳԻՐԸ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐ

Վերջին տարիներին Արցախում ազգային նշանակության տոնակատարումները և միջազգային գիտաժողովներն առավել հաճախակի են դարձել: Այդ կարգի միջոցառումների թվում կարելի է դասել հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի տոնակատարությունը: Այն փաստը, որ միջազգային գիտաժողովին ու Ամարասում տեղի ունեցած մշակութային միջոցառումներին մասնակցել են նաև արտերկրից, այդ թվում՝ օտարազգի հյուրեր, վկայում է նախաձեռնության բարձր նշանակության մասին:



Ըստ միջոցառումների ծրագրի, Արցախի պետամուսախարանում տեղի ունեցավ կրթական գիտաժողով: Նախքան միջոցառումը, համաժողովի մասնակիցները ծաղիկներ դրեցին արցախյան հերոսամարտում զոհված ուսանողների հուշարձանին, որից հետո տեղի ունեցավ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված հուշատախտակի բացում և օծում:

Գիտաժողովում ներկայացրին ողջունեց

Արցախի հոգևոր սխարանքը»․ այս էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մատենադարանի տնօրեն Ս. Արևշատյանի զեկուցման թեման:

ԱրՊՀ ռեկտոր Հ. Գրիգորյանը զեկուցեց «Մեսրոպյան գրերը, արցախյան դպրության ակունքները և հեռանկարները» թեմայով, իսկ ԱՄՆ Միչիգանի համալսարանից Գ. Բարդակչյանի զեկուցումը նվիրված էր նորագույն շրջանի հայոց լեզվի, գրականության և մտքի պատմությանը:

Գիտաժողովի երկրորդ մասում տեղի ունեցան մասնախմբային նիստեր, որոնց թեմաները վերաբերում էին կրթական քաղաքականության և մանկավարժության պատմությանն ու հոգեբանությանը, հայագիտական և մշակութային խնդիրներին: Ելույթ ունեցողները ինչպես տեղացի, այնպես էլ Հայաստանից ու արտերկրից ժամանած գիտական մասնագետներ էին:

**Կիմ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ,  
Ստեփանակերտ**

## ԼԵԳԵՆԴ ՇԱԽՄԱՏԻ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ, երբ խոսք է բացվում, թե ինչպես է ստեղծվել շախմատը, ականա հիշում են շախմատի խաղատախտակի ու ցորենի հատիկների մասին լեգենդը:

Դեպքը պատահել է 1500 տարի առաջ: Հնդկաստանի Սխերան թագավորի ապաշնորհ ղեկավարության հետևանքով այդ երկրին կործանում էր սպառնում: Մեսս անունով մի իմաստուն, ապացուցելու համար, որ թագավորը ամենահզոր անձը չէ, ստեղծում է մի խաղ, որտեղ ամենակարևոր ֆիգուրը՝ թագավորը, անպաշտպան ու անզոր է առանց մյուս ֆիգուրների օգնության: Շախմատային այդ խաղը մեծ տպավորություն է գործում Սխերանի վրա: Եվ նա, որպես շնորհակալություն կյանքի իմաստուն այդ դասի համար, խոստանում է կատարել Սեսսի ցանկությունը: Սնապարծ թագավորին ևս մի դաս տալու նպատակով իմաստունը խնդրում է ցորեն. շախմատի խաղատախտակի առաջին վանդակի համար՝ 1 հատիկ, երկրորդ վանդակի համար՝ 2, երրորդի համար՝ 4, չորրորդի համար՝ 8 և այսպես՝ երկրաչափական պրոգրեսիայով, մինչև 64-րդ վանդակը, իսկ ստացված թիվը գումարել:

Թագավորը համաձայնում է՝ ուրախանալով, որ հեշտ կազատվի իմաստունից: Բայց շուտով պարզվում է, որ նրա խնդրանքը կատարելն անհնար է: Հաշվարկները ցույց են տալիս, որ 64-րդ վանդակի վրա ցորենի հատիկների թիվը կհասնի 87. 076. 425. 546. 692. 656-ի: Իսկ ընդհանուր թիվը, որը կազմված է թվերի գումարով բարձրագրած 0-ից մինչև 63 աստիճան (1+21+22+23+24 և այլն), ստացվում է 18. 446. 744. 073. 709. 551. 615 հատիկ: Վերածելով ծավալի կատաղի 922. 337. 203. 685 խորանարդ մետր ցորեն, որի յուրաքանչյուր խորանարդ մետրը պարունակում է 20 մլն հատիկ: Այդ քանակությամբ ցորեն ստանալու համար անհրաժեշտ է երկրագնդի ողջ մակերեսը ցանել 8 անգամ:

Պերելմանը «Կենդանի մաթեմատիկա» գրքում այլ հաշվարկ է կատարում. ըստ նրա, ցորենի ողջ քանակությունը կազմում է 12. 000. 000. 000. 000 խմ, և այն պահելու համար հարկ կլինի կառուցել 4 մ բարձրությամբ և 10 մ լայնությամբ ամբար, որի երկարությունը կկազմի 300 մլն կմ, այսինքն՝ երկրագնդի և արևի միջև եղած հեռավորության կրկնակին:

### ԻՆՆԵ Ե ԸՆԽՄԱՏԸ. ՄՊՈՐՏ, ՄՐՎԵՍ, ԹԵ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այս հարցը շատերին է հուզել: Շախմատն ունի միլիոնավոր երկրպագուներ, աշխարհի բոլոր անկյուններում հազարավոր շախմատիստներ համառ պայքար են մղում միմյանց դեմ, ուսումնասիրում այդ խաղին նվիրված գրականությունը, փոր-

ծում լուծել շախմատային կոմպոզիցիայի արվեստի գաղտնիքները:

Այդ խաղում յուրաքանչյուր մարդ կարող է գտնել հաճելի ու գրավիչ մի բան: Շախմատը մտքի զվարճանք է, միաժամանակ՝ լարված մրցույթ, ազնիվ մենամարտ, որը մեծ ապրումներ է պահանջում: Շախմատիստը ինչպիսի՜ հոգեկան բավարարվածություն է ստանում, երբ խաղատախտակին իրականացնում է գեղեցիկ կոմբինացիա՝ դիրքի խոր ու բարդ վերլուծության, հոգեկան, տրամաբանական, մաթեմատիկական ընդունակությունների և երևակայության շնորհիվ:

Շախմատը պայքար է ոչ միայն մրցակցի, այլև ինքն իր դեմ, որը պահանջում է ստեղծագործական ուժ, հաշվարկի հմտություն, դիրքի զննահատման վառ ունակություն: 64 վանդակների վրա իրականացվում են ռազմավարական ճշգրիտ ծրագրեր, օգտագործվում են տակտիկական հնարքներ, տեղի են ունենում դրամատիկ իրադարձություններ: Ինչպես ասել է հին ժամանակների մի վարպետ՝ «Հայտնի շախմատիստը արտիստ է, գիտնական, ինժեներ և, վերջապես, հրամանատար ու հաղթող»:

Շախմատը փորձել են բնորոշել և հանրահայտ խաղացողները, և գիտնականներ ու արվեստագետներ: «Շախմատը մարդու հաղթանակներից մեկն է իր նկատմամբ: Ումանց համար այն հնչյուն է, մյուսների համար՝ նկար, ինձ համար պոեզիա է, պայքարի, մտքի, կամքի պոեզիա», - գրել է բանաստեղծ Պաբլո Ներուդան:

**Ալբերտ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

### «ԱՄԵՆԱՀԱՅԿԱԿԱՆ» ԷԼ ԶԵՆՔ ՈՒՆԵՆԱ

Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, մայիսի 1-ից հունիսի 20-ը երևանի «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի պլաստիկ վերականգնողական վիրաբուժության բաժանմունքը կազմակերպել է «Ամենահայկական քիթ» մրցույթը: Կենտրոնից տեղեկացանք, որ հայաստանցիների թիվը կազմել է 200-ից ավելի, 75%-ը՝ կին: Մասնակիցների ակտիվությունը, ինչպես նաև մրցույթի պայմանները նույնն են, ինչ նախորդ տարի: Բայց այս անգամ քթերը գնալով նրբանում են: Կենտրոնից ասացին, որ հայերը սկսել են մտածել իրենց արտաքինի մասին, իսկ այս մրցույթը՝ մասնակիցների համար սահմանած արտոնյալ պայմաններով, ավելի է նպաստում մեծ քթերի պակասելուն: Եթե այսպես շարունակվի՝ «հայկական քիթ» արտահայտությունն այլևս չի բնորոշի մեր ազգին: «Մի քանի հատ մնուշի համար կթողնենք», - կատակով մխիթարեց կենտրոնի մեր զրուցակիցը:

# ԵԿԱՄՏԱԲԵՐ ՊԱՇՏՈՆ



Գործազրկության բարձր տոկոսը մեր հասարակության ամոթալի երևույթներից մեկն է: Ավելի քան 140 հազար աշխատուձեռն և առողջ հայեր չեն կարողանում աշխատանք գտնել՝ ծայրը ծայրին հասցնելու և իրենց ընտանիքը կերակրելու համար: Չենց դրա համար էլ փախչում են: Անցյալ տարի ավելի քան 5 հազար հայաստանցի քաղաքացիություն է խնդրել Արևմտյան Եվրոպայի երկրներում: Չետաքրքիրն այն է, որ 2004 թ. արդյունքներն ամփոփելիս ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ Մանվել Բաղդասարյանն արձանագրեց, որ կառավարման ոլորտում կա 300 թափուր տեղ, որոնք այդպես էլ չեն գտնում իրենց տիրույթը: Խոսքն ավիացիայի, արդյունաբերության և էներգետիկայի ոլորտների մասին է: Ոլորտներ, որտեղ աշխատելու համար գիտելիք է պահանջվում: Իսկ ներկայիս երիտասարդությունը մտածում է միայն այն մասին, թե ինչ անի, որ ոչինչ չանի: Ուստի երիտասարդներին գրավում են այն բնագավառները, որոնք առնչվում են «հսկում», «վերահսկում», «արտոնագրում», «տեսչություն» հասկացությունների հետ: Իսկ «հարկային ծառայություն» և «մաքսային վարչություն» բառակապակցությունները երաժշտության պես ականջ են շոյում: Ջարմանալի ոչինչ չկա: Բավական է աշխատանքային օրվա վերջին կանգնել մնացած կարգի գերատեսչությունների մուտքերի մոտ և հետևել արտասահմանյան շքեղ ավտոմեքենաների ելունուտին, ինչպես նաև դրանց միջից դուրս եկող պարարտ կերպարանքներին, որոնց բջջային հեռախոսներն ասես սերտաճել են ականջներից լայն այտերին: Մի խոսքով՝ քաղցր կյանք: Ո՞վ չի ցանկանա օգտվել:

Չեչտ կյանքն իր գինն է պահանջում: Դրավկայությունն են տխրահռչակ «օդի հարկը», խնայողամարկղերում մուծվող կենցաղապասարկման վարձերին գումարվող հավելավճարները կամ հենց, ասենք, արտոնագրերը: Ինքներդ մտածեք՝ ինչ իմաստ ունի արտոնագիր պահանջել հմուտ ճարտարապետից կամ երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող բժշկից: Արտոնագիր ներկայացնելու պահանջն, արդյոք, կասկածի տակ չի՞ դնում բարձրագույն կրթության լեզգիտնությունը և դիպլոմի՞ որպես դրա տիրոջ մասնագիտական որակները հաստատող փաստաթղթի վավերական լինելը: Իսկ գուցե արժե ստուգել նրա՞նց մասնագիտական հմտությունը, ովքեր արտոնագրեր են տալիս, և հետո արտոնագիր տվողից էլ արտոնագիր տալու արտոնագիր պահանջել: Միգուցե արտոնագրերն էլ թարմացվեն ոչ թե երեք տարին մեկ, այլ ամեն տարի՞: Ի՞նչ վատ գործ է:

Իսկ գուցե արժե հա՞րկ դնել այն բնակարանների վրա, որոնց պատշգամբներից երևում է բիբլիական Արարատը. հիան՞ում ես Մասիսի հիասքանչ տեսքով՝ բարի եղիր վճարել: Համաձայն չե՞ս փոխիր բնակարանը:

Ավտոտեսուչներն ամեն տարի բավական փող են «կլկում» տեխստուգում չանցած ավտոմեքենաների տերերից: Ավտոմեքենաների քանակը տարեցտարի ավելանում է: Միայն անցյալ տարի Հայաստան է ներկրվել, ինքներդ դատեք, 15232 ավտոմեքենա: Բնակամաքար, ավելանում է նաև բենզինի իրացումը: Իսկ մայրաքաղաքի ավտոճանապարհները ահավոր վիճակում են: Ամեն տարի կարկատում են, բայց հաջորդ գարնանն էլի դարուփոսեր են: Քաղաքակիրթ երկրներում, որոնց թվին, երբ պետք է լինում, մենք էլ ենք մեզ դասում, վերը նշված գործարքներից ստացված շահույթի 40%-ը հատկացվում է ճանապարհների բարեկարգմանը, քանի որ պաշտոնյաներն այդ երկրներում ուրիշ են, մերոնց մնա չեն, որ հեշտ վաստակած փողով ապարանքներ կառուցեն և արտասահմանյան թանկարժեք ավտոմեքենաներ գնեն: Մերոնք կգերադասեն մի հազար դոլար տարվել Արգավանդի խաղատներում կամ մսխել հնչեղ անուններով ռեստորաններում, քան մի քանի դրամ մուծել պետության գանձարան, այն դեպքում, երբ այդ նույն պետության նախկին և ներկայիս իշխանավորները նրանց երկիրը թալանելու և անպատիժ մնալու անսահմանափակ իրավունք են տվել:

Ասացեք, խնդրեմ, ինչո՞ւ չարքային քա-

ղաքացուն չի խանդավառում մայրաքաղաքի շինարարական եռուզեռը: Չե՞ որ երևանն ազատվում է հողաշեն ավերակ տներից, որոնց փոխարեն վեր են խոյանում նոր շենքեր: Բայց ի՞նչ են կառուցում: Նման շինությունները նախահեղափոխական տարիներին կոչվում էին եկամտաբեր տներ: Կառուցեցիր-վերջացիր բնակարանները՝ վարձով տուր ու փող շինիր: «Ոչ մի բան չես անում, բայց եկամտող ավելանում է»: մոտավորապես սա էր խոստանում տարիներ առաջ բոլորիս հոգնեցրած հեռուստազովազոր: Նկատե՞նք, որ բավական արագ ձևավորվում է ապագա վաշխառուների խավը:

Ուշադրություն դարձրեք. եթե ինչ-որ բան էլ կառուցվում է որպես հասարակական օբյեկտ, ապա նախքան շինարարության ավարտը դռանը ցուցանակ են փակցնում՝ «Տրվում է վարձով»: Իրենք աշխատել չեն ուզում: Շատ ավելի ձեռնտու է օբյեկտը վարձով տալը և ուրիշի բրտինքով վաստակած փողը ստանալը:

Այսօր արդեն մտածելու ունակ մարդիկ ահագանգում են, որ երկրում գործի գիտակ տեխնիկական մասնագետների, արհեստավորների ու բանվորների մեծ պակաս է զգացվում: Անցյալում այդ պակասը լրացնում էին պրոֆտեխուսումնարանները, որոնց փոխարեն բազմացած քոլեջները չեն ապահովում ժամանակակից կյանքի պահանջներին համապատասխան գիտելիքների մակարդակ: Չեն փրկի նույնիսկ օտար լեզվի իմացությունն ու համակարգչային խորը գիտելիքները, որովհետև աշխատող ձեռքի պակաս կա. պետք է բուժել մարդկանց, թողարկել հաստոցներ ու սարքեր, կառավարել էներգաբուկներ և ինքնաթիռ քշել:

Մանկության տարիներին (ավագ ու միջին սերունդը հիշում է) մենք երագում էինք դառնալ տիեզերագնաց, ֆիզիկոս կամ շինարար: Առավել ճարպիկները երագում էին դառնալ տաքսու վարորդ, ծաղկավաճառ կամ մսագործ: Չենց նրանցից էլ, ի վերջո, ծնվեցին քաղաքական ու հասարակական գործիչներ, որոնք ասպարեզից դուրս մղեցին բոլոր ռոմանտիկներին ու երագողներին: Եվ նոր սերնդի երագանքի գագաթնակետը դարձավ հեշտ ձեռքբերվող ամենահամեղ պատառը:

Այս ամենը, ցավոք, հիշեցնում է Ջաննի Ռոդարիի հեքիաթը Զիպուլիտոյի արկածների մասին: Բայց Ռոդարիի հեքիաթը երջանիկ ավարտ ունի: Դրա համար էլ հեքիաթ է:

**Պավել ՋԱՆԳԻՐՈՎ**

## ՄԵՐՈՆՔ

Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ ջոկատին աջակցելու համար մայիսի 25-ին Մեղրաշատ գյուղի բնակիչներ Մ. Թորոսյանը, Վ. Արտիսյանը և Ա. Մադոյանը սահմանապահ ջոկատի իրամասնատարության կողմից պարզևատրվել են դրամական պարզակներով և հուշանվերներով: Մայիսի 2-ին նրանց հաջողվել էր հայտնաբերել և սահմանապահ ուղեկալին հանձնել հայ-թուրքական պետական սահմանի Մեղրաշատի հատվածն անցած սահմանախախտի: Հայտնաբերման ժամանակ սահմանախախտը (նախնական տվյալներով՝ Թուրքիայի քաղաքացի) դի-

մադրություն չի ցուցաբերել: Դեպքի առթիվ կատարվում է նախաքննություն, որից հետո կհայտնվեն նրա անձի և սահմանը հատելու նպատակների մասին տեղեկություններ: Այսուհետ, հաշվի առնելով վերջին տարիներին սահմանամերձ գյուղերում անասնազոդության և անասունների մաթիմի ճանապարհով Թուրքիա տեղափոխելու փաստերի աճը, սահմանապահների կողմից բարոյական և նյութական պարգևների կարժանան ինչպես նախկինում կատարված, այնպես էլ նախապատրաստվող սահմանախախտման վերաբերյալ տեղեկություններ հաղորդողները. անձի գաղտնիությունը կապահովվի:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*

### Սպարտակ ԱՍՈՅԱՆ

# ԿՊԱՎ... ԿՊԱՎ...

Մուշեղ պապը հազավ պիջակը, դրեց գըլ-խարկը, ձեռնափայտն առավ ու դուրս գնաց: Կինը հագիվ հասավ դարպասների մոտ.

- Այ մարդ, - ձայն տվեց նա, - միտդ էլի բան ընկավ: Ես ո՞ր...

Ծերունին ձայն չհանեց: Սովորության համաձայն օդում պտտեցրեց ձեռնափայտն ու սկսեց արագ-արագ քայլել: Կինը լավ էր հասկանում ձեռնափայտն օդում պտտեցնելու իմաստը՝ գնա գործիդ, քո ի՞նչ խելքի բանն է...

Տնեցիներից գաղտնի Մուշեղ պապը դիմում էր գրել մարզի վերադասներից մեկին՝ հաշմանդամ տղայի ընտանիքին դրամական օգնություն ցույց տալու համար: Իր ձեռքով էր գրել, կանաչ ինքնահոսով: Հատ-հատ շարել էր բառերը ու հիմա էլ հիշում էր գրածը. «Ծեր մարդ եմ, պատերազմի վետերան: Մեր հարևան Վարշամի հետ Բեռլինում քոչարի եմ պարել: Տղաս էլ Շուշիի ազատագրման ժամանակ է քոչարի պարել: Նրա երեխան դպրոց պիտի գնա, բայց շոր-կոշիկ չունի: Ի՞նչ կլինի, օգնեք տղայիս, քաղցր աչքով նայեք նրա ընտանիքին»: Տնեցիք չգիտեին: Իմանային չէին թողնի: Կինը կասե՛ր մի ոտքդ գերեզմանում է, էլի էն միամիտն ես մնացել: Հիմա ո՞ւմ եմ քաղցր աչքով նայում, այ հալիվոր: Տղան մի անգամ նույն խնդրանքով դիմում գրեց՝ պատասխանեցին՝ կմտածեմք, մի բան կանենք: Տարիներ են անցել, էդքան մտածել կլինի՞: Դրա համար էլ վերցրեց ու գրեց: Մուշեղ պապը շատ էր հավատում իր գրածի գորությունը: Դեռ մի բան էլ խրատեց տղային՝ թե խնդրանք-դի-

մում ես գրում, պիտի խնդրածիդ օձիքից բռնես, էնպիսի բաներ գրես, որ սառցե սիրտն էլ հալվի, էդ սառցի տեղը վարդ ու մանուշակ բուսնի: Թե չէ՛ սար ու ձոր ընկնելս ո՞րն է, այ բալա...

Եվ իր մտքերից ոգևորված քայլում էր Մուշեղ պապը, շտապում: Նույնիսկ հարեցին Միսակի բարևին իմիջիայլոց պատասխանեց: Անհանգիստ էր՝ հանկարծ էդ պաշտոնյաները չթողնեն տուն գնա: Ի՞նչ գիտես, որ հիմա իր խնդրածի ետևից չեն ընկել՝ մի տեղից մի բան կտրեն, մի ճար անեն՝ իր ուզածը բավարարելու համար: Հո քարից չեն, մարդու ծնունդ են...

Մուշեղ պապը շատ էր հավատում իր դիմումի գորությունը: Հավատն ու ոգևորությունը այն աստիճանի էր, որ նույնիսկ սկսեց պատկերացնել իրեն դիմավորելու պահը: Պապի, կասի ջահել քարտուղարուհին, գիտե՛ս քեզ ինչքան եմ ման եկել: Դիմում ես տալիս, ինչո՞ւ ետևից չես գալիս: Կամ երևի ուրիշ բան կասի՝ պապի, էլ մի կանգնիր, էսինչ բաժնից գնա տղայիդ ընտանիքի օգնության որոշումը վերցրու: Երևի ում անունով որ դիմում է գրել, էդ պաշտոնյան էլ կընդունի: Այ պապի, կասի, որ էդպես մարդ ես, էդպիսի գավակ ունես, ինչո՞ւ շուտ չէիր դիմում: Բա հինգ հազար դրամով տուն պահել կլինի՞: Կամ, երևի ուրիշ բան կասի՝ մեր պարտքն է, աչքի լույսի պես նայել ազատամարտիկներին, բոլոր նրանց, ովքեր... Մուշեղ պապը չկարողացավ պաշտոնավարողի միտքն ավարտել: Ոգևորությունը չթողեց, մտքերը խճմվեցին: Այնքան իրական էր ոգևորու-

թյունը, որ նման վերաբերմունքից, որպեսզի անոթով չմնա, մտավ կողքի խանութը՝ շոկոլադե էժանագին սալիկ առավ: Մտածեց՝ լավ լուրը դատարկ ձեռքով չեն դիմավորի: Հետո նոր մտքեր եկան: Օգնության թուղթը ձեռքին տուն կմտնի, օդում կթափահարի ու կասի՝ կորած հալիվորի տեղ էիր դրել ինձ, պառավ: Ես չլինեմ, կորած եք, է՛... Տեսեք ինչ թուղթ եմ բերել: Մուշեղ պապը երկրորդ հարկ բարձրացավ հեհնի: Միտքն այլևս չէր գործում: Վայրկյան առաջ ուզում էր բաղձանքն իրականացած տեսնել: Միայն աստիճանների կեսից նեղստեց՝ էս ինչի՞ եմ վերևի հարկում թառել: Ձգուշությամբ բացեց պաշտոնավորի ընդունարանի դուռն ու ներս մտավ: Երկու մարդ խոսում էին քարտուղարուհու հետ: Նա համոզում էր նրանց. «Շեֆը շատ է զբաղված, ընդունել չի կարող»: Մարդիկ չէին լսում, իրենցն էին պնդում:

- Մի վայրկյանով, մի վայրկյանով, աղջիկ ջան, - թախանձում էին նրանք:

Քարտուղարուհին բարկությունից դարձել էր սառն ու անտարբեր: Երևի դա էր պատճառը, որ չկատեց իրեն, մտածեց Մուշեղ պապը, նկատե՛ր՝ կժպտար:

- Չե՞ք հասկանում, - տոնը փոխեց քարտուղարուհին, - ասել է՝ հերս էլ գա, ներս չթողնես:

Մարդիկ հուսահատ հեռացան: Քարտուղարուհին վերջապես նկատեց Մուշեղ պապին:

- Պապի, դու էլ մի սպասիր, չի ընդունելու: Կարծես եռման ջուր լցվեց ծերունու գլխին:  
- Ինձ չե՛ս հիշում, աղջիկ ջան, - խելճա-

## ԱՅԴ ԲՈՒԺԻՉ ԾԻՃԱՂԸ

Ահա արդեն մի քանի տարի է, ինչ ողջ քաղաքակիրթ աշխարհը ծիծաղաբերապիայի բում է ապրում: Առաջատար բժշկական կենտրոնների հաստիքացուցակներում շտապ կարգով մըտցվում են «բուժարար ծաղրածուների» պաշտոններ: Խոշոր քաղաքների բնակիչներն անդամագրվում են «ծիծաղի ակումբներում»: Այդ ի՞նչ խնթություն է համակել աշխարհը:

## ԶՎԱՐԹ ՏԱՐԻՔ

Մասնագետները հավաստիացնում են, որ ուրախանալու ընդունակությունը մարդուն ի ծնե չի տրվում: Նորածինները սովորում են ժպտալ կյանքի առաջին երկու ամիսներին, իսկ ծիծաղել սկսում են միայն երրորդ ամսվա վերջին: Անենից «զվարթ» համարվում է 6-ամյա հասակը, երբ երեխան քրքջում է օրական 300-400 անգամ: Համեմատության համար. հասուն մարդը ժղպտում է օրական ընդամենը 15 անգամ:

## ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՀՈՐՄՈՆՆԵՐ

Ինչպես հաջողվեց պարզել Մերիլենդի (ԱՄՆ) համալսարանի բժշկական դպրոցի մասնագետներին, ծիծաղը խիստ բարենպաստ է ներգործում արյունատար անոթների վրա: «Լուրջ» ֆիլմ դիտող կամավորների արյան հոսքը արգելակվում էր 35 տոկոսով, իսկ կատակերգություն դիտելիս արյունը թափ էր առնում 22 տոկոսով: Նյարդաբան Ուիլյամ Ֆրայը (Ստենֆորդի համալսարան, ԱՄՆ), բացատրում է դա նրանով, որ ծիծաղելիս գոր-

ծում է մարդու մկանների մոտ 80 խումբ: Շարժվում են ուտերը, ցնցվում է կրծքավանդակը, տատանվում ստոծանին, սիրտն ավելի արագ է բաբախում, արյան մեջ բարձրանում է թթվածնի պարունակությունը՝ լիաթք ճերշնջելու հաշվին: Գերմանացի ծիծաղաբան Գյունտեր Սիկլը էլ ավելի հեռուն գնաց: Նրա կարծիքով, ծիծաղի մեկ րոպեն համագործ է ֆիզիկական ակտիվության 25 րոպեի: Իսկ ահա Ալան Ռեյսին (Ստենֆորդի համալսարան) հաջողվել է պարզել, որ ծիծաղի ժամանակ աշխուժանում են ուղեղի այն նույն կենտրոնները, որոնց վրա ներգործում է կոկահինը: Ավելին, ծիծաղող մարդու օրգանիզմն արտադրում է «երջակուրթյան հորմոններ» (էնդորֆիններ). բնական ափիոնատներ, որոնք բթացնում են ցավի զգացողությունն ու բարձրացնում տրամադրությունը:

## ԲԺԻՇԿԸ ԾԻՃԱՂ Է ՆՇԱՆԱԿԵԼ

Այն մասին, որ ծիծաղը ունակ է դաշնակից դառնալ ամենավտանգավոր հիվանդությունների դեմ պայքարում, աշխարհը տեղեկացավ 20-րդ դարի կեսերին: Հենց այն ժամանակ ամերիկացի երիտասարդ հոգեթերապետ Նորման Քազինսը իմացավ, որ անբուժելի հիվանդ է կոլլաբեցնողով: Բժիշկները լոկ տարածում էին ձեռքերը. «Ձեր պարագայում բժշկությունն անգոր է»: Դուրս գրվելով հիվանդանոցից, երիտասարդը իր սենյակում կինոպրոյեկտոր տեղադրեց, որ թեթևացնի կյանքի վերջին օրերը զվարճալի կատակերգությունների դիտումով: Օ՛, հրաշք: Սկզբում անհետացան ցավերը, հետո սկսեցին շարժվել ձեռքերի կաթվածահար մատները: Մի տարի անց Նորմանը ոտքի կանգնեց և ընդմիշտ մոռացավ մահացու հիվանդության մասին: Իսկ լույս աշխարհ եկավ նոր գիտություն՝ հեպոտալոգիան, որի ուսումնասիրության առարկան դարձավ ծիծաղը: Սակայն ծիծա-

ցած ասաց Մուշեղ պապը, - տասն օր առաջ դիմում էի բերել, եկել են պատասխանման համանամ:

Քարտուղարուհին փոքրիկ հայելու մեջ գնում էր իր հոնքերի ու շուրթերի որակը: - Շատ են դիմումները, շա՛տ, - հայելուց մի կերպ կտրվելով՝ ասաց նա, - ես ո՞ր դիմումը հիշեմ:

Մուշեղ պապը հիշեցրեց՝ էն կանաչ թանաքովը:

- Յե՛նց նույն օրը տվել եմ իրեն...

- Բան-ման չասա՞ց, - սրտնեղեց ծերունին:

- Մազալու պապի ես, - հայելու մեջ նայելով այս անգամ շուրթերը սկսեց ներկել քարտուղարուհին, - գիտե՛ս, թե որքան է զբաղված. կառավարության որոշումներին ընթացք տալ է պետք, մարզի գյուղերի հոգսերն են ուսերին: Օրական էլ հարյուրավոր դիմումներ ենք ստանում: Քիթ սրբելու ժամանակ ունի՞ր, որ նույն օրը որոշում կայացնի:

Մուշեղ պապն ուզեց նստել պատի տակ դրված աթոռին: Զի գնա՛ մինչև մի բան չիմանա:

- Պապի, մի նստիր, այսօր ոչ մեկին չի ընդունելու, աշխատանքն ավարտվում է, ես էլ եմ տուն գնում, - ասաց քարտուղարուհին ու վերցրեց պայուսակը:

Քարտուղարուհին ներս մտավ պաշտոնավորից տուն գնալու թույլտվություն ստանալու: Դուռը կիսաբաց էր: Մուշեղ պապը դռների արանքից ծիկ արեց: Պաշտոնավորը, որի ձեռքում էր իր տղայի ընտանիքի վիճակի բարելավելու հարցը, իրոք, շատ էր զբաղված: Դա նկատեց Մուշեղ պապը, կույր պիտի լինես, որ չնկատես: Մարդն ամբողջ մարմնով համարյա ընկած է եղ անտեր սարքի վրա և աշխատում է: «Էդ անտեր սարքը» համակարգիչ է, որի մասին ընդհանրապես գաղափար չունեն Մուշեղ պապը: «Ի՞նչ է էդքան բըզ-

բզում», - մտածեց ծերունին: Քարտուղարուհին դուրս եկավ ու դուռը ծածկեց:

- Պապի, մի սպասիր, - ասաց և կրունկները հատակին կտկտացնելով՝ դուրս գնաց:

Նրա ետևից՝ Մուշեղ պապը: Բայց ծերունին ոտքը կախ գցեց: Երեկվա միամիտը չի: Յե՛նվեց աստիճանների բարձրիքին, իբր շունչ է առնում: Թող էս փեշը կարճ աղջիկը գնա, մտածեց Մուշեղ պապը, ինքը մի հարմար պահի ներս կմտնի, քաղաքավարի ներողություն կխնդրի ու տղամարդավարի կխոսի հետը: Յամ էլ, որ իմանա ով է, ինչի համար է եկել, չի բարկանա: Ընդհակառակը, երևի կիրավորի, աթոռ կքաշի, կասի՝ նստիր, պապի: Երևի քեֆ-հալ էլ կհարցնի: Էդ ժամանակ ինքը շոկոլադե սալիկը կհանի, կկոտրատի, կզնի սեղանին: Ամեն ինչ իր սրտի ուզածով կլինի, խոսք ու զրույցն էլ կստացվի: Թե չէ ամեն ինչ էդ փեշը կարճ աղջկա ասելով հո չի՞...

Մուշեղ պապը նորից մտավ ընդունարան: Նստեց և կզակը հենեց ձեռնափայտին: Ակնդետ նայում էր լաքավարու դռն կողմը, որի ետևում ՆՄ էր՝ որդու ընտանիքի փրկարարը, որի որոշումով թոռը սեպտեմբերին հագուկապով դպրոց կգնա, գիրք ու տետր կառնեն, հացի խանութի պարտքը կփակեն, թոռն էլ մեկ-մեկ պաղպաղակ կուտի: Այս մտքերը ի՞նչ երանելի վայրկյաններ պարզեցին Մուշեղ պապին: Մազակալած դեմքին երանության ժպիտ ծաղկեց: Ուզեց ներս մտնել և համբուրել պաշտոնավոր այդ մարդու ձեռքերը, որ այդպիսի երջանիկ պահեր կարող է պարզել որդու ընտանիքին: Եվ կամացուկ բացեց դուռը, ներս մտավ: Կանգնեց պատի տակ: Պաշտոնավորը, որ կարծես համակարգիչ մեջ էր մտել, իսկի չնկատեց էլ ծերունուն: Աշխատում էր ու աշխատում: Նյարդայնանում էր, տրորում էր ճակատն

ու աչքերը: Ծխում էր ու ծխում: Մի պահ եղավ, որ Մուշեղ պապը խղճաց նրան: Ուզեց մոտենալ և ձեռքը ուսին դնել՝ որդի, մի քիչ էլ հանգիստ առ, էդքան աշխատել կլինի՞: Սիրտ չարեց: Ավելի ճիշտ, հիշեց հարևան Սեթրյանի, որ երկու հեկտար հող ունի, բայց ամեն օր գահլա է տանում՝ դրժվար է, ընտանիքով չենք հասցնում, կոտորվեցինք: Էդ ինչի՞ չեք հասցնում՝ մի հարցնող լինի: Արևը դուրս չեկած՝ դաշտ եք գնում, մութին տուն գալիս: Բա էս մարդն ի՞նչ ասի, այ Սեթո: Դու քո մեքենան մաքուր օդում աշխատում ես, ընտանիքիդ համար ապրուստ հետ գցում: Երբ ուզես, հաց կուտես, ջուր կխմես, արևկող կհանգստանաս, բա էս մարդուն մեր չի՞ բերել, որ առավոտից իրիկուն առանց հացու-ջուր աշխատում է, իմ ու քո նմանների հոգսը քաշում: Մուշեղ պապը մտածում էր ու միամտանալով հիանում պաշտոնավորի աշխատասիրությամբ: Յանկարծ չզգաց էլ, թե ինչ կատարվեց: Պաշտոնավորը միանգամից ոտքի կանգնեց, ծափ տվեց ու բռունցքով հարվածես սեղանին:

- Կպավ՛... Կպավ՛...  
Սեղանից թըթեր թափվեցին: Դրանց մեջ նաև Մուշեղ պապի կանաչ թանաքով գրած դիմումն էր:  
- Պապի, էս ի՞նչ խերով ոտք ունեիր, - պաշտոնավորի ոգևորությունը ավելի էր բորբոքվել, - քեզ Աստված ուղարկեց: Առավոտվանից չէր ստացվում, վերջը չորս դամա ու չորս տուգ կացրի:  
Մուշեղ պապը ոչինչ չէր հասկանում: Միայն նկատեց, որ պաշտոնավորի ոտքերի տակ՝ փափուկ գորգի վրա, ճորթվում էր իր դիմումը: Իսկ գլխում գնգում էր նրա անբնական ծայրը:  
- Կպավ՛... չորս տուգ... կպավ՛...

դաբերապիսան որպես այդպիսին առաջացավ շատ ավելի ուշ: Անցած դարի 80-ական թվականների սկզբին ամերիկյան Big Apple Circus կրկեսի տնօրեն Մայքլ Քրիստենսենը կազմակերպեց «Ծաղրածուների շտապօգնություն», որի աշխատակիցներն այցելում էին քաղցկեղով հիվանդ մանուկներին: Բժիշկները զարմանքով արձանագրում էին, որ ծաղրածուի այցելությունից հետո բուժման արդյունավետությունն աճում էր բազմակի: Յե՛նց այդ ժամանակվանից էլ բուժարար ծաղրածուները սկսեցին իրենց հաղթական երթը աշխարհով մեկ: Գերմանիայում հիմնադրվեց բժիշկ-ծաղրածուների մի ամբողջ ասոցիացիա, որոնք խաղի են վերածում ծանր հիվանդ երեխաների բուժումը: Ավստրիայի և Յուլանդիայի խոշոր հիվանդանոցների հաստիքացուցակներում հայտնվեցին բուժարար ծաղրածուների դրույքներ: Սակայն ամենից հեռուն գնացին իսրայելցիները: Յրիֆին քաղաքի Աեսաֆ Չարոֆ հոսպիտալում կազմակերպվեցին բժիշկներին, բուժքույրերին և ֆիզիոթերապևտներին «բժշկական ծաղրածուի» մասնագիտության ուսուցանման վեցամսյա դասընթացներ: Ծիծաղաբերապիսի մեկ այլ՝ ոչ պակաս տարածված ուղղություն է արդեն դարձել ծիծաղով բուժումը: Ամերիկյան և շվեդական բազմաթիվ կլինիկաներում բացվել են հատուկ «ծիծաղի կաբինետներ»: Այնտեղ աշխատող հոգեբերապետներն իրենց խնամյալներին «նշանակում են» հունորիստական հաղորդումների դրզավորված չափաբաժիններ:

ջանքերով Յնդկաստանի բոլոր խոշոր քաղաքներում բացվեցին հատուկ «ծիծաղի ակումբներ», ուր մարդիկ գալիս էին ի սրտե ուրախանալու և սույնով «ազատվելու ստրեսից ու կանխելու ինֆարկտը»: Մեր դարասկզբին «ծիծաղի ակումբների» մոդան հասավ նաև Արևմուտք: Վերջին հնգամյակում Ֆրանսիայում բացվել է այդօրինակ 30 հաստատություն, Գերմանիայում՝ ավելի քան 40, ԱՄՆ-ում՝ 300-ից ավելի: Տվյալ մեթոդի արդյունավետությունը հաստատված է լուրջ գիտականների ուսումնասիրություններով: Պատահական չէ, որ ներկայումս նմանատիպ բուժում են իրականացնում աշխարհի խոշորագույն բժշկական կենտրոնները: Այսպես, հայտնի ավստրիացի հոգեբան Իլոնա Պապուսեկը՝ Գրացի համալսարանից, առաջարկում է կիրառել «ծիծաղ-յոգան» սրտանոթային հիվանդությունների բուժման համար: Ինչ վերաբերում է հայոց աշխարհին, ապա «ծիծաղի ակումբի» դերին հավակնում են առաջին հերթին խորհրդարանը և կուսակցությունների մեծամասնության գրասենյակները: Այնպես է ստացվել, որ մեր համաքաղաքացիները ծիծաղում են առավելապես ողբերգական բաների վրա: Իհարկե, ծիծաղի բուժիչ ուժը դրսևորվում է նաև այստեղ: Բայց այդուհանդերձ շատ կուզենայինք, որ հայրենի «բուժարար ծաղրածուների» գրպաններում բժշկական վկայականներ լինեին, այլ ոչ թե պատգամավորական մանդատներ:

*Ե. ՍՈՍՔԵԼՅԱՆ*

### ԾԻԾԱԳԼԻ ԱՎՈՒՄԲՆԵՐ

Սակայն գիտատեխնիկական առաջընթացի ոչ մի նվաճում չի կարող փոխարինել կենդանի շփման ընթացքում առաջացող ծիծաղին: Առաջինը դա հասկացավ հնդիկ բժիշկ Մադան Կատարիան, որը մշակեց «ծիծաղ-յոգան»: 90-ականների կեսին նրա

**Եթե մարդը խելացի է, նա վաղ թե ուշ կհարստանա, իսկ հարստանալուց հետո հաստատ կիմարանա:**  
**ՏԻՆԼԵՅ ԴԱՆՆ**

### ՅՈՒՐՈՐԻՆԱԿ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

Գերմանացի կոմպոզիտոր և դիրիժոր Լյուդվիգ Շպորը ութ տարեկան դասեր հետ գնում է իր նոր օրատորիան փորձելու: Աղջնակը անտարբերությամբ է լսում ամբողջ օրատորիան: Բայց երբ սկսում է հնչել վերջաբանը՝ նկատելիորեն աշխուժանում է:

Շպորն ուզում է պարզել դասեր պոլիֆոնիկ երաժշտությունից «ստացած» հատուկ պատճառը:

- Քեզ շա՞տ դուր եկավ իմ ֆուգան, - հարցնում է հայրը:

- Օ՛, ո՛չ, հայրիկ, - պատասխանում է դուստրը, - երբ երաժիշտներն սկսում են ֆուգան, ես հասկանում եմ, որ քո ստեղծագործությունն արդեն մոտենում է իր ավարտին և մենք շուտով կվերադառնանք տուն ու կճաշենք:

### ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՈՎ

Պագանինին համերգից ուշանում էր: Նստելով կառք, նա կառապանին խնդրում է իրեն շուտ քատրոն հասցնել:

- Չեզ որքա՞ն պետք է վճարել, - հարցնում է կառապանին:

- Տասը ֆրանկ:

- Դուք կատակո՞ւմ եք:

- Ամենևին: Չէ՞ որ այսօր, յուրաքանչյուրից, ով լսելու է ձեր նվագը մեկ լարի վրա, դուք վերցնելու եք տասական ֆրանկ:

- Շատ լավ, - պատասխանում է Պագանինին, - ես ձեզ կվճարեմ տասը ֆրանկ,

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ ԱՊԱՐԱՆՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### «ՍՐՍՈՒՌ» ԱՆԵԿԴՈՏ

Քանի՞ տարի ապարանցիների մասին անկեղոտներ էին պատմում: Ուրիշներն էին պատմում: Հիմա իրենք են պատմում: Արդեն մի քանի օր երևանի փողոցներում, Արագած սարի շուրջ բռնված պարի մասնակիցների ձեռքում կարմիր շապիկով մի գիրք է երևացել. «101 սրտուռ անկեղոտ ապարանցիների մասին»: Կարծում ենք, որ ամիմաստ է այսպիսի գիրքը գրախոսելը: Պարզապես պետք է մեջբերում կատարել սրտուռ ապարանցի Վաչագան Սարգսյանի կազմած գրքից:

Գրքույկը ձևավորված է՝ նրանց մասին զվարճախոսությունների «կորիզը» կազմող էջով: Ինչո՞ւ հենց ավանակն է դարձել ապարանցիների բնավորության «գուգահեռ արտահայտիչը»: Մեր այս հարցին գրքույկի ապարանցի հեղինակն այսպես պատասխանեց. «Որովհետև ապարանցիները նրա պես համառ են, աշխատասեր ու միամիտ»:

\*\*\*

Երևանից մի երիտասարդ գալիս է Ապարան՝ հանգստանալու: Հանդիպելով մի պառավ կնոջ, հարցնում է.

- Ճի՞շտ է, տատի, որ ապարանցիները էշին ունուդ են ասում:

- Խա՛, ունուդ ջան, խա՛, - երևանցի երիտասարդին հանգստացնում է ապարանցի պառավը:

պայմանով, որ դուք ինձ քատրոն հասցնեք ձեր կառքի միայն մեկ անվով:

### ՈՐԸ Է ՄԻՋՈՅԸ

Երբ Օբերի ներկայությամբ խոսում էին ծերության մասին, հեզմանքով ասում էր. - Այո՛, ծերությունը ծանր բան է, սակայն մինչև հիմա դեռ ոչ ոք չի հնարել մի այնպիսի միջոց, որ մարդն ավելի երկար ապրի:

### ՈՒՇԱՅԱԾ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Կոմպոզիտոր Դանիել Օբերը մի անգամ Ռիխարդ Վագներից ասում է.

- Երեսուն տարի հետո միայն ես համոզվեցի, որ միանգամայն գուրկ եմ երաժշտական ծիրքից:

Վագները զարմացած հարցնում է.

- Եվ դրանից հետո դադարեցի՞ք երաժշտություն գրել:

- Ո՛չ, - քնծիծաղով պատասխանում է Օբերը, - ես այն ժամանակ արդեն հռչակված էի:

### ԱՐԳԵԼՎԱԾ ԹԵՄԱ

Օբերը չէր սիրում, երբ իր ներկայությամբ խոսում էին մահվան մասին: Նրա բարեկամներից մեկը այդ իմանալով, մի անգամ ասում է.

- Այնուամենայնիվ, երբևէ ձեր վերջին ժամն էլ կհնչի...

- Հոգ չէ, ես այն ականջի ետև կզգեմ, - հանգիստ պատասխանում է Օբերը:

\*\*\*

Ապարանի գյուղերից մեկի նախագահի գրասենյակում հայտարարություն պետք է փակցնել... Մուրճ չի ճարվում, բայց նախագահը ելքը գտնում է. «Գլխով կգարկեմ, կեթա...»: Խփում է, խփում, բայց պատի մյուս կողմից դուրս գալու ոչ մի նշան: Խեղճի գլուխը, ճակատն արդեն արյունոտվում են: Ասում են՝ գնանք տեսնենք, ինչ է կատարվում մյուս կողմում: Գնում, տեսնում են, որ կոլխոզի լենինականցի հաշվապահը, գլուխը պատին հենած, թերթ է կարդում:

\*\*\*

Լոռեցին մոլորված դիմում է հարևանին. - Ապո, ես ապարանցիները իսկական որ էշ են: Մեռա բացատրելով մեր հարևան ապարանցի Սերոժին, որ, ա, իմ կնիկը քու կնիկը չի: Մեկ ա, էլի չի հասկանում:

\*\*\*

Ապարանցի Սերոժին հարցնում են, թե ինչ ձիեր է սիրում:

- Գիտես, ախպերս, երբ խեծում եմ սևին, մտածում եմ սպիտակի մասին, սպիտակին եմ խեծում, մտքիս մեջ շեկն ա...


- Իսկ ինչպիսի՞ կանանց ես նախընտրում:

- Գիտես, ախպերս...

- Լավ, Սերոժ, արդեն պարզ է... Եվ այսպես՝ 101 անկեղոտ՝ զուճարած մահ... «Ապարանցան ռադիո»:

Ս. Գ.

**«Горцарар»**  
 Издаётся с июля 1999г.  
**АВТОР ПРОЕКТА- Ваграм БЕКЧЯН**  
 Зам. гл. редактора - **Роза ГУЛЯН**  
**Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ԴՈՒԼՅԱՆ**  
**ИЗДАТЕЛЬ**  
 Издательский Дом  
**«ШАГАНЭ»**  
 Лицензия серия ИД № 02313  
 Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер ПИ № 77-5015**  
 Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.  
 Материалы со знаком **♀** публикуются на правах рекламы.  
 Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.  
**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА-ЕЖЕМЕСЯЧНО**  
 Отпечатано  
 ОАО «Калужская типография стандартов»  
 Формат А3, объём 4,5 п.л.  
 тираж 1500 экз. Зак. № 1269  
**Территория распространения:**  
 Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.  
 В номере использованы материалы «АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «АЙКАКАН ЖАМАНАК», «ИРАВУНК», «ЧИ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».  
**Цена свободная.**  
**Адрес редакции:**  
 248001, г. Калуга, ул. Суворова, 160.  
 тел.: (0842)-56-59-29,  
 E-Mail: gortsarar@mail.ru  
 E-Mail: gortsarar@kaluga.ru  
 факс: (0842) 565-929,  
**www.gortsarar.ru**



E-Mail: bshahanev@kaluga.ru